## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1210-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2013 թվականի դեկտեմբերի 10-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Արաբական Միացյալ Էմիրություններից՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, անհատ բարերար Ավետիս Կիրկորովի կողմից Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի հասցեով ուղարկված՝ «TOYOTA INNOVA» մակնիշի ավտոմեքենայի (2013 թվականի արտադրության, սպիտակ գույնի, նույնականացման համարը՝ MHFXX43G5D0047741, 1500 կգ ընդհանուր քաշով, 41,900 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ԱՄ ՄՁՄ Մ/Տ) ներմուծման ծրագիրը: Ավտոմեքենան ծառայելու է Արարատյան Հայրապետական թեմին՝ թեմի հոգևորականներին, հավատացյալներին և ուխտավորներին ուխտագնացության նպատակով տարբեր եկեղեցիներ և սրբավայրեր տեղափոխելու համար:

2. Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմին՝ նշված ավտոմեքենայի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1211-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19294-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ԴԴ/22/13796-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N ՎՄ/3-4/15604-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (20 տեղ, 6,382 կգ ընդհանուր քաշով, 185,593.29 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,450 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1212-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19296-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N ԴԴ/22/13760-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N ՎՄ/3-4/15603-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված լաբորատոր պարագաների (մեկ տեղ, 22 կգ ընդհանուր քաշով, 573.61 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 997.90 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1213-Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19295-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 1/06/1337-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N ՎՄ/3-4/15609-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված երկու լուսային ցուցանակի (մեկ տեղ, 10 կգ ընդհանուր քաշով, 2,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 280 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1214-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19311-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 1/06/1346-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15666-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի հանդբոլի ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված 300 հանդբոլի գնդակի (15 տեղ, 124 կգ ընդհանուր քաշով, 900 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 1095 եվրո, «ՄԾՓ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1215-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19318-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N ՎՄ/3-4/15606-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) հեռախոսային ցանցի բաժանարար տուփ՝ մեկ տեղ, 0.5 կգ ընդհանուր քաշով, 144.11 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 8.42 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ.

2) «BenQ W1070» պրոյեկտոր, «Apple MacBook Pro» դյուրակիր համակարգիչ, համակարգչային սարքեր և պիտույքներ՝ մեկ տեղ, 9.5 կգ ընդհանուր քաշով, 13,786 ՄԱԷ-ի դիրհամին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 220 ՄԱԷ-ի դիրհամ, «Զվարթնոց» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1216-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/19244-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15658-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ.. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջեր-Էլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00076779) 2013 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հակաառեցման և ջեռուցման համակարգերի սարքավորումների մատակարարման ու տեղադրման աշխատանքների իրականացում՝ 4,863,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1217-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 2)**
**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/19243-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15670-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳԻՁԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2013 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N 1/HAHF պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամեկուսացման աշխատանքների իրականացում՝ 1,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1218-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/19241-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15690-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոլարթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05538574) 2013 թվականի նոյեմբերի 13-ին կնքված՝ N S-131113 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային մարտկոցների փորձանմուշների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,808,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1219-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/19240-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15672-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01008638) 2013 թվականի նոյեմբերի 28-ին կնքված՝ N 19112013-01/YSSP-13-23_Egac պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 100 առնետի ձեռքբերում՝ 260,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1220-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբեր 16-ի N 3.1/3.8-1/19454-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբեր 18-ի N 02/7663-13, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2013 թվականի դեկտեմբեր 18-ի N 05/14.2/7786-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբեր 18-ի N ՎՄ/3-8/15864-13 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի դեկտեմբեր 13-ի N 101/104.3.2/6397-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 469,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագիրը (կցվում է):

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Ստեփանավանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 10/13)
02 դեկտեմբերի 2013թ.
Հիմնադրամի [illegible] պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

«Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման աշխատանքները՝ հաշվի առնելով ներկայումս գործող մանկապարտեզի շենքի հետագա շահագործման անհնարինությունը: |
| 2. | Ծրագրի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործ | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ, ( ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481, հեռ. (+374-10) 54-53-05. էլ. փոստ՝ a-varosyan@mail.ru) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ, ( ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481, հեռ. (+374-10) 54-53-05. էլ. փոստ՝ a-varosyan@mail.ru) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Ստեփանավան, կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 469 000 000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ստեփանավանի քաղաքային համայնքը՝ շինությունն անհատույց հանձնվելու է համայնքին: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013 թվականի դեկտեմբերի 02-ից – 2014 թվականի դեկտեմբերի 01-ը |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. հողային աշխատանքներ (մինչև 2014 թվականի մարտի 30-ը) - 2 100 000 դրամ,<br>2. երկաթբետոնե հիմնակմախքի և պատերի կառուցում (մինչև2014թվականի հունիսի30-ը) - 215.000.000 դրամ՝ այդ թվում<br>- բետոն - 1580 մ³, 66 360 000 դրամ,<br>- ամրան – 140 տոննա, 61 600 000 դրամ,<br>- տախտակ – 29 մ³, 4 490 000 դրամ,<br>- պեմզաբետոնի բլոկ - 110 մ³, 1 740 000 դրամ<br>3. ինժեներական ենթակառուցվածքների կառուցում (մինչև 2014 թվականի հուլիսի 31-ը) - 86.400.000 դրամ,<br>4. տանիքի ջրամեկուսացում՝ (մինչև 2013 թվականի օգոստոսի 31-ը) - 25 500 000 դրամ,<br>5. արտաքին երեսապատման և ներքին հարդարման աշխատանքներ՝ (մինչև 2014 թվականի սեպտեմբերի 30-ը ) – 108.000.000 դրամ,<br>6. տարածքի բարեկարգում և կառուցապատման այլ աշխատանքներ՝ (մինչև 2014 թվականի դեկտեմբերի 01-ը) – 21.000.000 դրամ,<br>7. նախագծային ծախսեր – 5.000.000 դրամ,<br>8. կազմակերպչական ծախսեր – 6.000.000 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Նախատեսվող կազմակերպչական ծախսերը կկազմեն 6.000.000 դրամ այդ թվում բեռները Երևանից - Ստեփանավան ավտոտրանսպորտային միջոցներով տեղափոխելու ծախսերը : |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման , տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Լոռու մարզպետարան, Ստեփանավանի քաղաքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1221-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/19460-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 02/7662-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՖԲ/ԱնՄ-4/9582-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15820-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 843,310 դրամ ընդհանուր արժեքով «Տանիքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2013 թվականի նոյեմբերի 25-ին կնքված՝ N 251113 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արմավիր քաղաքի Երևանյան 42 հասցեի տան տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 843,310 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«02»-ը դեկտեմբերի 2013թ.

# «Տանիքի վերանորոգում»
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Երևանյան փ., թիվ 42 տան տանիքի վերանորոգում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել՝ Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հոլանդիայի «Մեննենկինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, քաղ. Հարդերվայք 3842 DR, Օուստայնդե 23) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավանե քաղամաս» ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, ք. Արմավիր՝ սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 843,310 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սոցիալապես անապահով ընտանիք՝ Առաքելյան Սերինե (անձնագիր՝ AK 0688107, տրվ. 17.01.2011թ. 054 կողմից, հեռ. 094.85.56.61) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2013 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2013թ. թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում բնակելի տան տանիքի վերանորոգման աշխատանքներ՝ 843,310 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագրությունը, ծավալները և նախատեսվող գինը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան տանիքի վերանորոգման պայմանագիր, որի արժեքը կազմում է 843, 310 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվությունների ներկայացում «Մեննենկինդերեն» բարեգործական հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց՝ տնօրենի տեղակալ Վ. Ավագյան
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1222-Ա**
**քաղ. Երևան**

# «ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/19509-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/7716-13, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 01/12.1.1/7761-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 03/07-1/15146-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16057-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672) իրականացվող՝ 1,944,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագիրը (կցվում է):

2. «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Սիմոնյան կրթական հիմնադրամի
տնօրեն Մարի Լու Փափազյանի կողմից
«11» Դեկտեմբերի 2013թ.

# ԹՈՒՄՈ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | • Աջակցել կրտսեր խմբի (12-18 տարեկան) ՀՀ երիտասարդներին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում,<br>• Առանձին դասընթացների միջոցով աջակցել կրտսեր խմբի երիտասարդներին զարգացնելու իրենց տեխնոլոգիական գիտելիքները կոնկրետ ուղղություններով,<br>• Առանձին նպատակաուղղված դասընթացների միջոցով աջակցել ավագ խմբի (19-26 տարեկան) ՀՀ երիտասարդներին իրենց մասնագիտական գիտելիքների ընդլայմանը կոնկրետ ուղղություններով,<br>• Խրախուսել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին ստեղծել շփումներ իրենց հասակակից օտարերկրյա երիտասարդների, մասնագետների և արհեստավարժների հետ,<br>• Աջակցել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին իրենց մասնագիտական տեսական գիտելիքները օգտագործել պրակտիկ, գործարար դաշտում՝ այսպիսով օժանդակելով նոր աշխատատեղերի և գործարար հարաբերությունների ստեղծմանը<br>Վերը նշված նպատակներին հասնելու համար, Ծրագրի կատարողը, օգտագործելով սույն ծրագրի, ինչպես նաև նախորդ՝ “Ստեղծարար Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն” ծրագրի առկա ազատ ռեսուրսները, նպատակ ունի իրականացնել տարբեր անվճար և վճարովի միջցառումներ: |

2

| | | |
|---|---|---|
| 2. | Ծրագրի բարեգործական [illegible] նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը իրականացվելու է “Սեմ և Սիլվա Սիմոնյան” հիմնադրամի միջոցներով (պետական գրանցման համար 801422035 գրանցված 05.05.2011թ. ԱՄՆ Տեխաս նահանգի քարտուղարության կողմից) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրը իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 01245672, ՀՀ ք.Երևան, Հալաբյան 16, գրանցման թիվ 222.160.01143, վկայական 03Ա086142) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Երևան քաղաքի Հալաբյան 16 հասցեում գտնվող շինության տարածքներում՝ ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 1944000000 (մեկ միլիարդ ինը հարյուր քառասունչորս միլիոն) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են՝<br>• Կրտսեր խմբի 12-18 տարեկան ՀՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի նման բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող ընդհանուր և կոնկրետ ուղղություններով կրթական գործունեությանը: Շահառուների ընտրությունը կլինի բաց անդամագրության միջոցով: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հյուրընկալել հազարավոր երիտասարդներ, այն կգործի գրեթե արտադասարանային ակումբների ոճով սակայն յուրօրինակ կրթական մեթոդներով: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով:<br>• Ավագ խմբի 19-26 տարեկան ՀՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի արդեն իսկ որոշակի մասնագիտական փորձ ունեցող շահառուների համար, որոնք ինքնուրույն հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող |

| | | |
|---|---|---|
| | | նպատակաուղղված դասընթացներին: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | «ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագիրը, լինելով նախորդ «ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի շարունակությունը, նախատեսվում է իրականացնել ևս 3 տարով՝ հետագայում շարունակելու նպատակով, 2014թ-ի հունվար ամսից մինչև 2016թ-ի դեկտեմբեր ամիսը ներառյալ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը պայմանականորեն կարելի է բաժանել որպես մի քանի զուգահեռ իրականացվող միջոցառումների ամբողջություն, որոնք անընդհատ իրականացվելու են հետագա երեք տարիների ընթացքում և միտված են ծրագրի նպատակների իրագործմանը, մասնավորապես Ծրագրի կատարողը իրականացնելու է հետևյալ միջոցառումները.<br>• ստեղծարար տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդներին ընդհանուր գիտելիքների տրամադրում<br>• նպատակաուղղված դասընթացների միջոցով խորացնել երիտասարդների մոտ առանձին ուղղվածության գիտելիքները<br>• տարբեր միջոցառումների կազմակերպման միջոցով խրախուսել կենտրոնի երիտասարդների միջև շփումը<br>• օգտագործելով սույն ծրագրի, ինչպես նաև նախորդ՝ "Ստեղծարար Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն" ծրագրի առկա ազատ ռեսուրսները, իրականացնել տարբեր վճարովի և անվճար միջոցառումների ցանկ, որոնք նպատակ ունեն հնարավորություն ընձեռնել կենտրոնի անդամ երիտասարդներին շփվելու, հաղորդակցվելու օտարերկրյա երիտասարդների, մասնագետների, արհեստավարժների հետ, ինչպես նաև օգտագործել իրենց ստացած տեսական գիտելիքները պրակտիկ, աշխատանքային նախագծերում:<br>Երեք տարվա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են 1692495000 (մեկ միլիարդ վեց հարյուր իննսուներկու միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար ) դրամ, որից՝<br>• Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի |



| | | |
|---|---|---|
| | | (ուսուցանողներ, ուսման բովանդակության մշակողներ և մասնագետներ, վարժանքներ ստուգողներ, ծրագրավորողներ, հաղորդակցման ոլորտի աշխատողներ, խորհրդատուներ և այլն) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -1006020000 (մեկ միլիարդ վեց միլիոն քսան հազար) դրամ:<br>• Նպատակաուղղված դասընթացների կազմակերպման ծախսեր – 87480000 (ութսունյոթ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) դրամ:<br>• Գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 216877500 (երկու հարյուր տասնվեց միլիոն ութ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) դրամ:<br>• Հիմնական միջոցների և տարածքի պահպանման ծախսեր – 25818750 (քսանհինգ միլիոն ութ հարյուր տասնութ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ:<br>• Տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր - 30982500 (երեսուն միլիոն ինը հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր) դրամ:<br>• Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 304661250 (երեք հարյուր չորս միլիոն վեց հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր - 20655000 (քսան միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • 2014-2016թթ-ի ընթացքում 286740000 դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 71685000 դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 51030000 դրամի գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցման և այլ համանման |

| | | |
|---|---|---|
| | | ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում դրամի գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 15187500 դրամի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 15187500 դրամի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 78732000 դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 8748000 դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 36450000 դրամի տարբեր միջոցառումների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 12150000 դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 12150000 դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Երեք տարվա համար կազմակերպչական ծախսերը կազմում են 251505000 (երկու հարյուր հիսունմեկ միլիոն հինգ հարյուր հինգ հազար) դրամ, որից՝<br>• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -145800000 (մեկ հարյուր քառասունհինգ միլիոն ութ հարյուր հազար) դրամ: |



| | | |
|---|---|---|
| | | • Վարչական մասի գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 38272500 երեսունութ միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) դրամ:<br>• Վարչական մասի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ծախսեր – 4556250 (չորս միլիոն հինգ հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր հիսուն) դրամ:<br>• Վարչական մասով տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր - 5467500 (հինգ միլիոն չորս հարյուր վաթսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ:<br>• Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 53763750 (հիսուներեք միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր - 3645000 (երեք միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար) դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել տարբեր շահագրգիռ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական և մասնավոր մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը կմշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենթարկվի անկախ աուդիտորի կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1223-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-2/19462-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ԴԴ/22/13823-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15877-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բժշկական նշանակության ապրանքների (40 տեղ, 4,641 կգ ընդհանուր քաշով, 242,177.75 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7,200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1224-Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19310-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1/06/1362-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ԴԴ/22/13789-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15801-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից՝ անհատ բարերար Արմեն Ոսկանյանի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված կենսաբանական ակտիվ հավելումների և դեղորայքի (5 տեղ, 115 կգ ընդհանուր քաշով, 249,783.45 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,680 ռուսական ռուբլի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1225-Ա**

**քաղ. Երևան**

## «ՌԱԶՄԱԿԱՆ ԹԱԵՔՎՈՆԴՈՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19298-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 1/06/1338-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15805-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Պրովանս-Արմենի» բարեգործական կազմակերպության կողմից որպես օժանդակություն «Ռազմական թաեքվոնդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզասարահի մարզագույքի, մարզահագուստի և կահույքի (141 տեղ, 3,729.2 կգ ընդհանուր քաշով, 17,391 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Ռազմական թաեքվոնդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1226-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19313-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N ՎՄ/3-4/15605-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշման մեջ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա, 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-093-Ա և հունիսի 29-ի N Մ-505-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2,072.2 մլն դրամ» բառերը փոխարինել «6,799.2 մլն դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված՝ ներքոհիշյալ բեռները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) խոտի սերմ՝ 9 տեղ, 7,299 կգ ընդհանուր քաշով, 36,089.90 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,750 եվրո փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ.



2) խոտհնձիչի պահեստամասեր՝ մեկ տեղ, 367 կգ ընդհանուր քաշով, 30,550 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,550 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն  Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի անվանումը | «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» |
| 2. | Ծրագրի անմիջական նպատակները | ՀՀ ֆուտբոլային ենթակառուցվածքների զարգացում |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն-ՈՒԵՖԱ, (Շվեյցարիա, Ժնև), Ֆուտբոլի ասոցացիաների միջազգային ֆեդերացիա-ՖԻՖԱ, (Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագրի՝ բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի № 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի | Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 5. | Ծրագիրն իրականացնողները | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 6. | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաքում՝ սպորտի բնագավառում: |
| 7. | Ծրագրի շահառուները կամ նրանց ընտրության սկզբունքները, չափանիշները | «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոց» |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2007 թվականի մարտի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ 4944.2 մլն դրամ<br>2. Բժշկական սարքավորումների ներմուծում՝ 25 մլն դրամ<br>3. Լուսավորություն՝ 410 մլն դրամ<br>4. Մարզադահլիճի մանրահատակ՝ 70 մլն դրամ<br>5. Կահավորում՝ 150 մլն դրամ<br>6. Շինանյութի և ներքին հարդարման պարագաների, խաղադաշտերի մշակման տեխնիկայի, խոտածածկի խնամքի պարագաների և լողավազանի ախտահանիչ միջոցների ներմուծում՝ մեկ մլրդ 200 մլն դրամ<br>Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Մարզադպրոցի շենքի կառուցման նախագծի կազմում («Երևաննախագիծ ՓԲԸ-ի կողմից»)՝ 17,2 մլն դրամ, մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացում՝ 1823 մլն դրամ, տեխնիկական հսկողությունը՝ 1,56 մլն դրամ, հեղինակային հսկողություն՝ 7,44 մլն դրամ, լողավազանի և վերականգնողական կենտրոնի կառուցում՝ 600 մլն դրամ, խաղադաշտերի համար տրիբունաների կառուցում՝ ստորին մասում տեղադրված հանդերձարաններով՝ 1840 մլն դրամ, |



| | | |
|---|---|---|
| | | մարզադաշտի կառուցում՝ 110 մլն դրամ: Նախատեսվում է կառուցել նաև 1 հատ արհեստական խոտածածկով խաղադաշտ՝ 175 մլն. դրամ (որի համար ՖԻՖԱՆ տրամադրել է 400 հազար ԱՄՆ դոլար) և 10 հատ ստանդարտ չափսերի խաղադաշտ՝ 370 մլն դրամ: Բժշկական սարքավորումների ներմուծում՝ 25 մլն դրամ, լուսավորության սարքավորումների ներմուծում՝ 410 մլն դրամ, մարզադահլիճի մանրահատակի ներմուծում՝ 70 մլն դրամ, շինանյութի և ներքին հարդարման պարագաների, խաղադաշտերի մշակման տեխնիկայի, խոտածածկի խնամքի պարագաների և լողավազանի ախտահանիչ միջոցների ներմուծում՝ մեկ մլրդ 200 մլն դրամ: Կահավորում 150 մլն դրամ:<br>Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Գործարքները, որոնցով ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում | Ակնկալվում է մարզադպրոցի կառուցման շինարարական և կահավորման աշխատանքների իրականացման, անհրաժեշտ նյութերի ներմուծման և ձեռքբերման գործարքների դիմաց հարկային արտոնություն: |
| 12. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն 6799.2 մլն դրամ է, որից՝<br>6478.3 մլն դրամ ՈՒԵՖԱ-ն:<br>320.9 մլն դրամ ՖԻՖԱ-ն: |
| 13. | Անմիջականորեն շահառուների սպառմանը չուղղվող ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 14. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 15. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը (եթե վերահսկողություն նախատեսվում է) | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ

Ռ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1227-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-2/19673-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N ՖԲ/ԱևՄ-4/9611-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՍ/3-4/16060-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված 10,800 հատ տոմատի մածուկը և 10,000 կգ չամիչը (1,900 տեղ, 20,120 կգ ընդհանուր քաշով, 59,844 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բաշխման ցանկերը կցվում են) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա և 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ                                   Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

հնվոյս 05107 21.11.2013

| N N | Ապրանքի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տոմատի մածուկ | կգ | 8640 | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 380 |
| | | | | | Այգուտ | 164 | 841 |
| | | | | | Մարտունի | 73 | 375 |
| | | | | | Դպրաբակ | 81 | 416 |
| | | | | | Վահան | 188 | 965 |
| | | | | | Կալավան | 23 | 118 |
| | | | | | Բարեպատ | 6 | 31 |
| | | | | | Ջրավանք | 31 | 159 |
| | | | | | Անտառամեջ | 22 | 113 |
| | | | | | Գավառ | 61 | 313 |
| | | | | | Թթուջուր | 81 | 416 |
| | | | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 262 |
| | | | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 87 |
| | | | | | Արտաշատ | 16 | 82 |
| | | | | | Գետազատ | 39 | 200 |
| | | | | | Մրգանուշ | 16 | 82 |
| | | | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 67 |
| | | | | | Սևաբերդ | 41 | 210 |
| | | | | | Ջրառատ | 18 | 92 |
| | | | | | Աբովյան | 38 | 195 |
| | | | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 246 |
| | | | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 77 |
| | | | | | Իջևան | 18 | 92 |
| | | | | Երևան | | 3201 | 16,424 |
| | Ընդամենը | | | | | 4335 | 22,244 |

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝          Հ. Ղազարյան

Մ. 16/12.11

*Բեռի բաշխման ցանկ*

ինվոյս 05107 21.11.2013

| N N | Ապրանքի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Չամիչ | կգ | 10000 | Գեղարքունիքի մարզ | Գետիկ 74 | 642 |
| | | | | | Այգուտ 164 | 1,422 |
| | | | | | Մարտունի 73 | 633 |
| | | | | | Դպրաբակ 81 | 703 |
| | | | | | Վահան 188 | 1,631 |
| | | | | | Կալավան 23 | 199 |
| | | | | | Բարեպատ 6 | 52 |
| | | | | | Զորավանք 31 | 269 |
| | | | | | Անտառամեջ 22 | 191 |
| | | | | | Գավառ 61 | 529 |
| | | | | | Թթուջուր 81 | 703 |
| | | | | Արմավիրի մարզ | Արտաշար 51 | 442 |
| | | | | Արարատի մարզ | Վեդի 17 | 147 |
| | | | | | Արտաշատ 16 | 139 |
| | | | | | Գետազատ 39 | 338 |
| | | | | | Մրգանուշ 16 | 139 |
| | | | | Կոտայքի մարզ | Չարենցավան 13 | 113 |
| | | | | | Սևաբերդ 41 | 356 |
| | | | | | Զորաղբյուր 18 | 156 |
| | | | | | Արզական 38 | 330 |
| | | | | Լոռու մարզ | Վանաձոր 48 | 416 |
| | | | | Տավուշի մարզ | Դիլիջան 15 | 130 |
| | | | | | Իջևան 18 | 156 |
| | | | | Երևան | 3201 | 27,762 |
| | Ընդամենը | | | | 4335 | 37,600 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն* *Հ. Ղազարյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1228-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-2/19457-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16076-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված համակարգչի մկնիկները (1,000 հատ՝ 11 տեղ, 136 կգ ընդհանուր քաշով, 8,250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1229-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/19242-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15806-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՎԲ գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02617882) 2013 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N 04122013-01/YSSP-13-21_ma պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միկրոալիքային վառարանի ձեռքբերում՝ 50,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1230-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 2)**
**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-1/19517-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16059-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՎԲ գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02617882) 2013 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N 11122013-01/YSSP-13-44_ma պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սառնարանի ձեռքբերում՝ 192,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1231-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 3)

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-1/-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16078-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01210095) 2013 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված՝ N 05122013-01/YSSP-13-19_ma պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր պարագաների ձեռքբերում՝ 141,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1232-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-1/19666-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N ՎՄ/3-4/16139-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայփոստ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2013 թվականի նոյեմբերի 4-ին կնքված՝ N CPS-04-11-2013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փոստային ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1233-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-214-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/19245-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15802-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագրի մասին» N Մ-214-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեգանետ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01552095) 2013 թվականի նոյեմբերի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցուցանակների պատրաստման աշխատանքների իրականացում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1234-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1032-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/19239-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15799-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1032-Ա որոշման (2013 թվականի հունիսի 7-ի N Մ-399-Ա և հոկտեմբերի 4-ի N Մ-862-Ա որոշումների խմբագրությամբ) 1-ին կետի 1-ին ենթակետում «10 մլն դրամի չափով» բառերը փոխարինել «21 մլն դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1235 -Ա**
**քաղ. Երևան**

## «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/19168-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 02/7488-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ՖԲ/ԱնՄ-5/949-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի N ՎՄ/3-4/15392-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2014 թվականին իրականացվող ծրագիրը՝ 102,759,368 դրամ արժողությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Երևան, Կ. Ուլնեցու 64, ՀՎՀՀ՝ 01009295)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 6-ին կնքված N 222226 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրական էներգիայի մատակարարում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 013.08.13.0948 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Երևան ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N 010957156 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05001995) 2010 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրված կամ գնված ապրանքների մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հեփի ֆուդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00118412) 2013 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրված հացամթերքի մատակարարում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Գրանդ Քենդի» հայ կանադական ՀՁ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02226764) 2010 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրվող քաղցրավենիքի և հրուշակեղենի մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Տեխնոքեմ ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529519) 2010 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրված կամ գնված ապրանքների մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588296) 2013 թվականի ապրիլի 29-ին կնքված պայմանագրում (2013 թվականի հոկտեմբերի 29-ի

համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 4,356,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Էվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433357) 2013 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված N 30 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ֆինանսական հաշվետվությունների՝ այդ թվում հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության, սեփական կապիտալի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունների աուդիտորական ուսումնասիրություն՝ աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

11) «Էյ- ի- Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2010 թվականի ապրիլի 9-ին N Ե-1118 պայմանագրին կից համաձայնագիր N 3/Ե-1118-ում, 10.04.2013 թվականի և համաձայնագիր N 4/Ե-1118-ում, 28.10.2013 թվականի դրությամբ նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ 170,370 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) ՀՀ ոստիկանության ՀԿԱ վարչության հետ (ՀՎՀՀ՝ 01533334) 2009 թվականի հունվարի 8-ին կնքված N 01/09 պայմանագրին կից համաձայնագրերում, 01.03.2010 թվականի և 28.10.2013 թվականի դրությամբ նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հայտնաբերել և «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ ներկայացնել մուրացկանությամբ, թափառաշրջիկությամբ զբաղվող և խնամքից զուրկ մնացած անչափահասներին՝ 7,978,368 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01842346) 2011 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված պայմանագրում (2013 թվականի հոկտեմբերի 11-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տրամադրել պահանջված քանակի սննդամթերքի և տնտեսական ապրանքների այն տեսականին, որն առկա է տվյալ պահին վաճառքի համար՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի նոյեմբերի 27-ին կնքված N 023/27/112012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

15) «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00861057) 2013 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նշված ծառայությունների մատուցում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Մ.Անտոնյանի.................... կողմից
04.դեկտեմբերի, 2013թ.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից
2014 թ. իրականացվելիք սոցիալական

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի անմիջական նպատակը | Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ բռնության ենթարկված, անապաստան, լքված, կրթությունից և այլ հանրային ծառայություններից դուրս մնացած, վարքային և հոգեհուզական խնդիրներով, երեխաների համար «ճգնաժամի միջամտության» ծառայությունների մատուցում երկու ճանապարհով՝<br>1) Ներկենտրոնային - Կենտրոնում այդ երեխաների ժամանակավոր ապաստանում, խնդիրների կարգավորում և վերադարձ ընտանիք և/կամ վերատեղավորում<br>2) Արտակենտրոնային - «Թեժ գիծ» ծառայության կամ ոստիկանության ու այլ մարմինների կողմից ստացված ահազանգերի առնչությամբ սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում դժվար իրավիճակում հայտնված երեխաներին՝ անմիջապես նրանց ընտանիքում՝ կոնկրետ համայնքում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող մասնագիտական ծառայությունների մատուցման, սննդամթերքի, հագուստի, գրենական պիտույքների, սանիտարատեխնիկական պարագաների գնման, ընթացիկ վերանորոգման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայությունների համար ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում: |
| 3 | Բարեգործը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորքի գրասենյակ: |
| 4 | Ծրագրի կատարողը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ,<br>հասցեն՝ ք. Երևան, Կ.Ուլնեցու փողոց, թիվ 64, ՀՎՀՀ 01009295 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ք. Երևան և ՀՀ բոլոր մարզեր<br>Բնագավառը՝ սոցիալական, հոգեբանական և սոցիալ-մանկավարժական աջակցություն |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 102 759 368 ՀՀ դրամ: Միջոցները ստացվելու են ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից: Գումարը բաշխվելու է ըստ հետևյալ ծառայությունների և աշխատանքների.<br>1. սնունդ 11 800 000 ՀՀ դրամ<br>2. բժշկական սպասարկում/դեղորայք/ և հագուստի ծախսերում 2 025 000 ՀՀ դրամ<br>3. Կոմունալ և կապի ծախսեր 9 000 000 ՀՀ դրամ<br>4. շինությունների սպասարկում 1 000 000 ՀՀ դրամ<br>5. հաշվապահական և աուդիտորական ծառայություն 4 856 000 ՀՀ դրամ<br>6. տրանսպորտային ծախսեր՝ 4 150 000 ՀՀ դրամ<br>7. գրասենյակային պիտույքներ 500 000 ՀՀ դրամ<br>8. սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) 42 000 000 ՀՀ դրամ,<br>9. կազմակերպչական ծախսեր՝ 18 450 000 դրամ .<br>10.սանիտարահիգիենիկ պիտույքներ 1 000 000 ՀՀ դրամ<br>11. ՀՀ Ոստիկանություն կողմից իրականացվող ծառայոթյուն՝ 7 978 368 ՀՀ դրամ:<br>Բոլոր վերոնշյալ ծախսերը կատարվելու են «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի շահառու երեխաների համար: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ թափառաշրջիկ, աղքատ, անապահով, մուրացիկ, անապաստան, խնամազուրկ, լքված, բռնությունների զոհ, կրթությունից դուրս մնացած, օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող, վարքային խնդիրներ ունեցող երեխաները և նրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և աջակցության կարիք ունեն և Կենտրոն են ուղղորդվում ՀՀ Ոստիկանության անչափահասների բաժանմունքի (կնքված պայմանագրի համաձայն), ինչպես նաև Երեխաների պաշտպանության մարզային բաժինների, համայնքային Խնամակալության հանձնաժողովների, պետական և հասարակական տարբեր ատյանների կողմից (ստորագրված համաձայնագրերի համաձայն):<br>Շահառուների թիվը.<br>Ներկենտրոնային ծառայությունների շրջանակներում կսպասարկվի մոտ 250 երեխա և առնվազն 200 ծնող:<br>Արտակենտրոնային ծառայությունների շրջանակներում կսպասարկվի մոտ 1200 երեխա և ավելի քան 1000 ծնող/խնամող:<br>Կենտրոնի ծրագրերում ընդգրկված երեխաները/ընտանիքները կստանան իրենց կարիքներին համապատասխան՝ ԵԱԿՀ-ի կողմից տրամադրվող բոլոր ծառայությունները:<br>Ակնկալվում է, որ տարվա ընթացքում ծառայություններ կստանան մինչև 3000 շահառուներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը և/ կամ սկիզբը, ավարտը | 01.01.2014թ. - 31.12.2014թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Արագ միջամտության և աջակցության կարիք ունեցող երեխաների սոցիալական, հոգեբանական, բժշկական, սոցիալ-մանկավարժական և մասնագիտական այլ աջակցության, խնամքի և օգնության կազմակերպում՝ Ապաստանման, Թեժ գիծ, Արտակենտրոնային, Խնամատարության ծառայությունների միջոցով: Այդ երեխաներից՝ առավել բարձր ռիսկի ներքո և կյանքի ու զարգացման համար վտանգավոր պայմաններում գտնվողները ժամանակավորապես ապաստանվում են Կենտրոնում և ստանում 24-ժամյա խնամք, պաշտպանություն, սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իրավական ծառայություններ, իսկ ոչ այնքան վտանգավոր պայմաններում, սակայն դարձյալ բարձր ռիսկի ներքո գտնվողները Կենտրոնից աջակցություն են ստանում անմիջապես իրենց համայնքում և ընտանիքում:<br>Աջակցությունը ներառում է երեխայի/ընտանիքի իրավիճակի բազմամասնագիտական գնահատում, անհատական աշխատանքի պլանի ստեղծում, միջամտության պլանի ստեղծում և իրագործում:<br>Ծառայությունները մատուցվելու են երկու մոտեցմամբ՝ Ներկենտրոնային՝ 24-ժամյա ապաստանման և Արտակենտրոնային՝ անմիջապես երեխայի ընտանիքում: |

| | | |
|---|---|---|
| | | Ներկենտրոնային ծրագրի շահառու երեխաները ստանում են ծառայությունների ամբողջ փաթեթը՝ խնամք (հիգիենա, սնունդ), սոցիալ հոգեբանական աջակցություն, առողջապահական (տեղում կամ ստացիոնար բուժ. հաստատությունում), կրթական, մշակութային, մասնագիտական կողմնորոշման աջակցություն, թերապևտիկ ծառայություններ՝ հաղթահարելու բռնարարքների, լքումների և այլ վնասող վերաբերմունքի պատճառով առաջ եկած տրավմաները երեխաների մոտ: Այս ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցումը տևում է միջինը մեկ ամիս, սակայն անհրաժեշտության դեպքում՝ խնդրի յուրահատկություններից և երեխայի/ընտանիքի կարիքներից ելնելով, մինչև 6 ամիս և ավելի:<br>Արտակենտրոնային ծառայությունների միջոցով երեխան/ընտանիքը սպասարկվում են տեղում, իրենց ընտանիքում և համայնքում, մասնագետներն այցելում են երեխայի ընտանիքին: Այս դեպքում երեխան ստանում է, իր կարիքներին համապատասխան, բոլոր վերը հիշատակված ծառայությունները, բացի ապաստանումից և խնամքի ծառայություններից: Մասնագետները տեղում համախմբում են բոլոր այն կառույցներին և ծառայություններին, որոնք առնչվում են տվյալ ընտանիքի հետ, կազմակերպում դեպքերի քննարկումներ՝ օգնելու երեխային/ընտանիքին՝ հաղթահարելու ստեղծված ռիսկային իրավիճակը: Սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն ստանալու համար երեխաները/ծնողները 3-6 ամիս տևողությամբ կապ են պահպանում կենտրոնի հետ՝ հեռախոսային կամ այցելությունների միջոցով:<br>Երեխաները Կենտրոն են ուղղորդվում ՀՀ բոլոր բնակավայրերից, առանց տարածքային սահմանափակում-ների, ինչպես նաև մերձավոր սփյուռքից՝ Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա և այլն:<br>Ծախսերը ներառում են երեխաների խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, կրթական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերն ու սահմանված հարկերը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը 2014թ. համար կազմելու է 102 759 368 ՀՀ դրամ, որը ըստ եռամսյակների բաշխվելու է հետևյալ կերպ. առաջին եռամսյակ՝ 25 689 842 ՀՀ դրամ, երկրորդ եռամսյակ՝ 25 689 842 ՀՀ դրամ, երրորդ եռամսյակ՝ 25 689 842 ՀՀ դրամ և չորրորդ եռամսյակ՝ 25 689 842 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք 2014թ. հունվարի 01-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը ԱԱՀ-ից ազատում հետևյալ կազմակերպությունների/ծառայությունների գծով՝<br><br>1. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Հյուսիս» մասնաճյուղ, ք. Երևան, Քոչար 13ա, ՀՎՀՀ 01520882, պայմանագիր N 222226, կնքված 06.08.2008թ. Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար - 2 500 000 ՀՀ դրամ<br><br>2. «Հայռուսգազարդ» ՓԲԸ, ք.Երևան, Չարենցի 141ա, ՀՎՀՀ 00046317, 07.07.2013թ կնքված Պայմանագիր N 013.08.13.0948, Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար - 5 000 000 ՀՀ դրամ |
| | | 3. «Երևան ջուր» ՓԲԸ ք.Երևան, Աբովյան 66ա, ՀՎՀՀ 01555351, Պայմանագիր՝ կնքված 01.04.2009թ. Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար - 1 500 000 ՀՀ դրամ<br><br>4. «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ, ք. Երևան, Ահարոնյան 2, ՀՎՀՀ 02500052, երկկողմանի Պայմանագիր, Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար - 500 000 ՀՀ դրամ<br><br>5. «Աշտարակ - Կաթ» ՓԲԸ, Արագածոտնի մարզ, գյուղ Ագարակ, ՀՎՀՀ 05001995, Պայմանագիր՝ կնքված է 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ. Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար - 1 500 000 ՀՀ դրամ<br><br>6. «Հեփի ֆուդ» ՍՊԸ, ք. Երևան, Այգեձոր 32, ՀՎՀՀ 00118412, Պայմանագիր՝ կնքված 04.12.2013թ. Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար - 1 800 000 ՀՀ դրամ<br><br>7. «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ, ք. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ 02226764, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար – 1 500 000 ՀՀ դրամ<br><br>8. «Տեխնոքեմ Ինտերնեյշնլ» ՍՊԸ, ք. Երևան, Արշակունյաց 278, ՀՎՀՀ 01529519, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար՝ 1 000 000 ՀՀ դրամ<br><br>9. «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, թիվ 17 ՀՎՀՀ 02588296, Պայմանագիր՝ կնքված 29.04.2013թ., Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար՝ 4 356 000 ՀՀ դրամ<br><br>10. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ, ք.Երևան, Նուբարաշեն 10փ., տ.6, ՏԳՀ՝ ք.Երևան, Մյասնիկյան պող. 5/1, ՀՎՀՀ 00433357, Պայմանագիր N 30, կնքված 15.10.2013թ., Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար՝ 500 000 ՀՀ դրամ<br><br>11. «Էյ-Ի-Ջի-Սերվիս», ք.Երևան, Արցախի-10, ՀՎՀՀ 00930884, 09.04.2010թ.N Ե-1118 Պայմանագրին կից Համաձայնագիր N 3/Ե-1118, 10.04.2013թ. և Համաձայնագիր N 4/Ե-1118, 28.10.2013թ. Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար՝ 170 370 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | | 12. ՀՀ Ոստիկանություն, ք.Երևան, Նալբանդյան 130, ՀՎՀՀ 01533334, 08.01.09թ. կնքված Պայմանագիր N 01/09 և կից Համաձայնագրեր՝ կնքված 01.03.2010թ. և 28.10.2013թ. Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար՝ 7 978 368 ՀՀ դրամ:<br><br>13. «Ալեքս Գ-րիգ» ՍՊԸ, ք.Երևան, Տիչինայի 3-րդ նրբ., 2/2, ՀՎՀՀ 01842346, Պայմանագիր՝ կնքված 14.10.2011թ. և Համաձայնագիր՝ 11.10.2013թ. Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար՝ 5 000 000 ՀՀ դրամ<br><br>14. «Յուքոմ» ՍՊ Ը, ք.Երևան, Սայաթ-Նովա 40/1, ՀՎՀՀ 00024873, Պայմանագիր N 023/27/112012՝ կնքված 27.11.2012թ. Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար՝ 1 500 000 ՀՀ դրամ<br><br>15. «ՊԱՏՐՈՆ Ռ-Մ» ՍՊԸ, ք.Երևան, Հանրապետության 62/133, ՀՎՀՀ 00861057, Պայմանագիր՝ կնքված 10.10.2013թ. Պայմանագրի գինը 01.01.2014թ.-31.12.2014թ. համար՝ 400 000 ՀՀ դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 18 450 000 ՀՀ դրամ կամ ծրագրի ընդհանուր արժողության 17.95 %-ը: Կազմակերպական ծախսերը ներառում են մարզերում անչափահասների հարցերով հանձնաժողովների նիստերին Կենտրոնի աշխատակիցների մասնակցության, կենտրոնի ադմինիստրատիվ աշխատակազմի աշխատավարձի. անբարենպաստ ընտանիքների այցելությունների համար տրանսպորտային և գործուղման, մասնագիտական աշխատակազմի վերապատրաստման (սեմինարների/դասընթացների մասնակցություն), տպագրական, գրասենյակի աշխատակիցների գրենական պիտույքների և համակարգիչների սպասարկման ծախսերը: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների. այլ կառույցների/ կազմակերպությունների հետ | ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Կրթության և գիտության նախարարության, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ, համայնքային Խնամակալության հանձնաժողովներ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ և այլն: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը իրականացվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և հայաստանյան գրասենյակների, «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամի Խորհրդի, ինչպես նաև եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1236 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/3.8-1/18911-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 02/7431-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N ԴԴ/22/13512-13, այաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15293-13, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/10.2/3746 -13, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/15/5089-13, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 101/104.3.2/6223-13, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/5745-13, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 01/7182-13, Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/07.2/6497-13, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/14/4607-13 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 01/14.1 /4678-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014-2018 թվականներին իրականացվող՝ 240,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Առողջության առաջնային պահպանում» ծրագիրը (կցվում է):

2. «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ծնն« բարեգործական հասարակական կազմակերպության
վարչության նախագահ Հ. Մինասյանի կողմից
29 նոյեմբերի 2013 թ.

# «ԾԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014-2018 թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ «ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Ծնն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով բացահայտված և համայնքային ժողովներում հաստատված հետևյալ առողջապահական խնդիրների լուծումը.<br>1. Բուժկետերի կառուցում, վերանորոգում, բժշկական սարքավորումների և դեղորայքի ներկրում և տրամադրում, այդ թվում նաև ՀՀ և ԼՂՀ մասնագիտացված հիվանդանոցներին<br>2. Գյուղական առողջապահական հաստատությունների համար վերապատրաստման անվճար դասընթացների կազմակերպում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ |
| 3. | Բարեգործը | 1. «Ծէն-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 24 rue de Maubeuge, 75009, Paris, France<br>2. Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, հասցեն՝ Bread for the World - Church Development Service Caroline - Michaelis-Str.1, 10115 Berlin, Germany<br>3. Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (EPER), հասցեն՝ Bd de Grancy 17bis Case postal 536, CH-1001 Lausanne, Switzerland |

| | | |
|---|---|---|
| | | 4. Վարդանաց Ասպետներ բարեգործական կազմակերպություն, 8 Berkshire Dr., Winchester, MA01890, USA |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Ծնն» բարեգործական հասարակական կազմակերպությու, հասցեն՝ Նալբանդյան 110, հեռ.567031, ՀՎՀՀ՝ 01503283 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերում, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղեր և նախկին շրջկենտրոններ, բնագավառը՝ առողջապահական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 240.000 ԱՄՆ դոլար, հինգ տարվա համար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերի, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղերի և նախկին շրջկենտրոնների բնակիչները: Գյուղերը, որտեղ կիրագործվեն մարդասիրական ծրագրեր, կընտրվեն «Ծնն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի N 1207 - Ն որոշմամբ ընդունած Կայուն զարգացման ծրագրի «Մարդկային զարգացում և մարդկային աղքատության կրճատում» բաժնում տեղ գտած չափանիշները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014-2018 թթ. ընթացքում կնորոգվեն և կկահավորվեն բուժկետեր (արժեքը 220.000 ԱՄՆ դոլար), աջակցություն կցուցաբերվի առողջապահական հաստատություններին՝ ուսուցողական ծրագրեր կազմակերպելու ուղղությամբ (արժեքը 20.000 ԱՄՆ դոլար): |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Բժշկական սարքավորումների և դեղորայքի ներմուծում (նախատեսվող գինը՝ 200.000 ԱՄՆ դոլար), շինանյութերի և ապրանքների ձեռքբերում ներքին շուկայում (նախատեսվող գինը՝ 20.000 ԱՄՆ դոլար): Կատարվելիք |

| | | |
|---|---|---|
| | | շինարարական աշխատանքների արժեքը կկազմի 20.000 ԱՄՆ դոլար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Շեն» ԲՀԿ առաջարկվող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, և նշված մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • «Շեն» կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելություններ կատարեն ծրագրերի իրագործման վայրեր՝ աշխատանքների ընթացքը ստուգելու համար:<br>• Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում:<br>• Համաձայն ընդունված կարգի պարբերական հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1237 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/3.8-1/18914-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 02/7433-13, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/07.1/6807-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15300-13, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/14.3/3743-13, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 01/15/5107-13, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 101/104.3.2/6221-13, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/5744-13, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/09/2/7206-13, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 01/21.1 /4705-13, Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/04.1/6499-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014-2018 թվականներին իրականացվող՝ 160,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Ճանապարհաշինություն» ծրագիրը (կցվում է):

2. «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության

վարչության նախագահ Հ. Մինասյանի կողմից

29 նոյեմբերի 2013 թ.

«ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014-2018թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ «ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով բացահայտված և համայնքային ժողովներում հաստատված հետևյալ խնդրի լուծումը.<br><br>Գյուղական ճանապարհների, հեղեղատարների և կամուրջների կառուցում և նորոգում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ |
| 3. | Բարեգործը | 1. «Շեն-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 24 rue de Maubeuge, 75009, Paris, France<br>2. Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, հասցեն՝ Bread for the World - Church Development Service Caroline - Michaelis-Str.1, 10115 Berlin, Germany<br>3. Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (EPER), հասցեն՝ Bd de Grancy 17bis Case postal 536, CH-1001 Lausanne, Switzerland |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Նալբանդյան 110, հեռ.567031, ՀՎՀՀ՝ 01503283 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերում, ԼՂՀ հետավոր, սահմանամերձ գյուղեր և նախկին շրջկենտրոններ, բնագավառը՝ ճանապարհաշինություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 160.000 ԱՄՆ դոլար հինգ տարվա համար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերի, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղերի և նախկին շրջկենտրոնների բնակիչները: Գյուղերը, որտեղ կիրագործվեն մարդասիրական ծրագրեր, կընտրվեն «Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի N 1207 - Ն որոշմամբ ընդունված Կայուն զարգացման ծրագրի «Մարդկային զարգացում և մարդկային աղքատության կրճատում» բաժնում տեղ գտած չափանիշները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014-2018 թթ. ընթացքում կնորոգվեն գյուղական ճանապարհներ (արժեքը 40.000 ԱՄՆ դոլար), հեղեղատարներ և գյուղական կամուրջներ (արժեքը 120.000 ԱՄՆ դոլար) |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Շինանյութեր և ճանապարհաշինական սարքավորումներ (նախատեսվող գինը՝ 70.000 ԱՄՆ դոլար ներքին շուկայում գնվող: Կատարվելիք շինարարական աշխատանքների արժեքը կկազմի 90.000 ԱՄՆ դոլար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Շեն» ԲՀԿ առաջարկվող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է ՀՀ և ԼՂՀ մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • «Շեն» կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելություններ կատարեն ծրագրերի իրագործման վայրեր՝ աշխատանքների ընթացքը ստուգելու համար:<br>• Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհառու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում:<br>• Համաձայն ընդունված կարգի պարբերական հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1238 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/3.8-1/18912-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 02/7432-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՖԲ/ԱնՄ-4/9290-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15302-13, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 01/14.2/3731-13, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/15/5097-13, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 101/104.3.2/6224-13, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/5740-13, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/09/2/7208-13, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 01/14.1 /4681-13, Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/07.2/6502-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014-2018 թվականներին իրականացվող՝ 150,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն» ծրագիրը (կցվում է):

2. «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության
վարչության նախագահ Հ. Մինասյանի կողմից
29 նոյեմբերի 2013 թ.

# «ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014-2018թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով բացահայտված և համայնքային ժողովներում հաստատված մարդասիրական հետևյալ օգնության տրամադրումը .<br><br>1. Տարերային աղետների դեպքում (երաշտ, հեղեղ, կարկտահարություն, ցրտահարություն) վերջիններիս հետևանքների վերացում՝ Շեն ԲՀԿ թիրախ համայնքների տուժած բնակչությանը տրամադրելով շինանյութեր, սերմեր, մեքենաներ, տրակտորներ՝ կառուցելով հեղեղատարներ և դրենաժային համակարգեր, հիմնելով հողապաշտպան անտառաշերտեր:<br><br>2. Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին (զոհված ազատամարտիկների ընտանիքներ, փախստականներ, բազմազավակ ընտանիքներ)՝ տրամադրելով հագուստ, կահույք, շինանյութեր, սերմեր, տնկիներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ |
| 3. | Բարեգործը | 1. «Շէն-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 24 rue de Maubeuge, 75009, Paris, France<br>2. Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, հասցեն՝ Bread for the World - Church Development Service Caroline - Michaelis-Str.1, 10115 Berlin, Germany<br>3. Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (EPER), հասցեն՝ Bd de Grancy 17bis Case postal 536, CH-1001 Lausanne, Switzerland |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Նալբանդյան 110, հեռ.567031, ՀՎՀՀ՝ 01503283 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերում, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղեր և նախկին շրջկենտրոններ. բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 150.000 ԱՄՆ դոլար հինգ տարվա համար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերի, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղերի և նախկին շրջկենտրոնների բնակիչները: Գյուղերը, որտեղ կիրառգործվեն մարդասիրական ծրագրեր, կընտրվեն «Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի N 1207 - Ն որոշմամբ ընդունած Կայուն զարգացման ծրագրի «Մարդկային զարգացում և մարդկային աղքատության կրճատում» բաժնում տեղ գտած չափանիշները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014-2018 թթ. ընթացքում շահառու համայնքներին կտրամադրվի մարդասիրական օգնություն (արժեքը 150.000 ԱՄՆ դոլար) |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Գյուղատնտեսական տեխնիկա, հագուստ և շինանյութեր (նախատեսվող գինը՝ 100.000 ԱՄՆ դոլար, որից 50.000 ԱՄՆ դոլարի ներքին շուկայում գնվող և 50.000 ԱՄՆ դոլարի ներկրվող), և 50.000 ԱՄՆ դոլարի աշխատանք: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «ՇՆՆ» ԲՀԿ առաջարկվող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է ՀՀ և ԼՂՀ մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • «ՇՆՆ» կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելություններ կատարեն ծրագրերի իրագործման վայրեր՝ աշխատանքների ընթացքը ստուգելու համար:<br>• Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում:<br>• Համաձայն ընդունված կարգի պարբերական հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

5/9/16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1239 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/3.8-1/18909-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 02/7434-13, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/07.1/6806-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15301-13, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 01/14.1/3728-13, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/15/5092-13, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 101/104.3.2/6225-13, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/5742-13, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/7209-13, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 01/21.1 /4706-13, Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 01/04.3/6516-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014-2018 թվականներին իրականացվող՝ 250,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության
վարչության նախագահ Հ. Մինասյանի կողմից
29 նոյեմբերի 2013 թ.

# «ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014-2018 թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ «ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով բացահայտված և համայնքային ժողովներում հաստատված հետևյալ խնդրի լուծումը.<br><br>Խմելու և ոռոգման ջրի ներգյուղային համակարգերի կառուցում և նորոգում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ |
| 3. | Բարեգործը | 1. «Շէն-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 24 rue de Maubeuge, 75009, Paris, France<br>2. Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, հասցեն՝ Bread for the World - Church Development Service Caroline - Michaelis-Str.1, 10115 Berlin, Germany<br>3. Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (EPER), հասցեն՝ Bd de Grancy 17bis Case postal 536, CH-1001 Lausanne, Switzerland<br>4. «Յալկեզյան» հիմնադրամ-Կանադա, հասցեն՝ 191 University Avenue East, Cobourg, Ontario K9A 4X6 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Նալբանդյան 110, հեռ.567031, ՀՎՀՀ՝ 01503283 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերում, Ջավախքի և ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղեր և նախկին շրջկենտրոններ, բնագավառը՝ ջրամատակարարում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 250.000 ԱՄՆ դոլար, հինգ տարվա համար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերի, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղերի և նախկին շրջկենտրոնների բնակիչները: Գյուղերը, որտեղ կիրագործվեն մարդասիրական ծրագրեր, կընտրվեն «Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի N 1207 - Ն որոշմամբ ընդունած կայուն զարգացման ծրագրի «Մարդկային զարգացում և մարդկային աղքատության կրճատում» բաժնում տեղ գտած չափանիշները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014-2018 թթ. ընթացքում կնորոգվեն խմելու ջրագծեր 130.000 ԱՄՆ դոլար արժեքով և ոռոգման ջրագծեր 120.000 ԱՄՆ դոլար արժեքով |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Շինմոնտաժային տեխնիկա, շինանյութեր (նախատեսվող գինը՝ 210.000 ԱՄՆ դոլար ներքին շուկայում գնվող և 40.000 ԱՄՆ դոլար՝ աշխատանք) |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Շեն» ԲՀԿ առաջարկվող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է ՀՀ և ԼՂՀ գյուղատնտեսության նախարարությունների, ինչպես նաև նշված մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • «Շեն» կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելություններ կատարեն ծրագրերի իրագործման վայրեր՝ աշխատանքների ընթացքը ստուգելու համար:<br>• Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհառու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում:<br>• Համաձայն ընդունված կարգի պարբերական հաշվետվությունները կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1240 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-1/19525-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 02/7437-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՖԲ/ԱնՄ-4/9289-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/07.2/14564-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15296-13, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 01/12.1/3721-13, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/15/5093-13, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 101/104.3.2/6210-13, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/5743-13, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 01/09/2/7207-13, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 01/21.1 /4707-13, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 01/13.1/4678 -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014-2018 թվականներին իրականացվող՝ 300,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Օգնություն դպրոցներին, մանկապարտեզներին և համայնքային կենտրոններին» ծրագիրը (կցվում է):

2. «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզպետարաններին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության

վարչության նախագահ Հ. Մինասյանի կողմից

29 նոյեմբերի 2013 թ.

«ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014-2018 թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ «ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով բացահայտված և համայնքային ժողովներում հաստատված կրթական հետևյալ խնդիրների լուծումը.<br>1. Դպրոցների ու մանկապարտեզների վերանորոգում, կահավորում<br>2. Համակարգիչների տրամադրում<br>3. Դպրոցահասակ երեխաներին էկոլոգիական գյուղատնտեսության տարրերի ծանոթացում՝ արտադասարանային դասընթացների կազմակերպման և դպրոցամերձ գոտիների բարեկարգման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ |
| 3. | Բարեգործը | 1. Օրանժ Արմենիա ՓԲԸ, ք.Երևան, Գր.Լուսավորչի 9<br>2. Orange Foundation, 78 rue Olivier de Serres 75505 Paris Cedex 15, France, SIRET 39187236300018<br>3. Օրանժ Արմենիա Հիմնադրամ, ք.Երևան, Գր.Լուսավորչի 9<br>4. Շէն-Ֆրանսիա բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 24 rue de Maubeuge, 75009, Paris, France<br>5. Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, հասցեն՝ Bread for the World - Church Development Service Caroline - Michaelis-Str.1, 10115 Berlin, Germany<br>6. Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (EPER), հասցեն՝ Bd de Grancy 17bis Case postal 536, CH-1001 Lausanne, Switzerland |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Նալբանդյան 110, հեռ.567031, ՀՎՀՀ՝ 01503283 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերում, Ջավախքի և ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղեր և նախկին շրջկենտրոններ, բնագավառը՝ սոցիալական, կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 300.000 ԱՄՆ դոլար հինգ տարվա համար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Կոտայքի մարզերի, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղերի և նախկին շրջկենտրոնների երեխաները: Գյուղերը, որտեղ կիրագործվեն մարդասիրական ծրագրեր, կընտրվեն «Շեն» ԲՀԿ ուսումնասիրությունների միջոցով, հաշվի առնելով ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի N 1207 - Ն որոշմամբ ընդունած Կայուն զարգացման ծրագրի «Մարդկային զարգացում և մարդկային աղքատության կրճատում» բաժնում տեղ գտած չափանիշները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014-2018 թթ. ընթացքում մասնակիորեն կնորոգվեն և կկահավորվեն դպրոցական սպորտային դահլիճներ (արժեքը 80.000 ԱՄՆ դոլար), մանկապարտեզներ (արժեքը 140.000 ԱՄՆ դոլար) և համայնքային |

| | | |
|---|---|---|
| | | կենտրոններ (արժեքը 80.000 ԱՄՆ դոլար) |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ և այլ պարագաներ, շինանյութեր (նախատեսվող գինը՝ 200.000 ԱՄՆ դոլար) որից 160.000 ԱՄՆ դոլարի ներքին շուկայում գնվող և 40.000 ԱՄՆ դոլարի ներկրվող: Կատարվելիք շինարարական աշխատանքների արժեքը կկազմի 100.000 ԱՄՆ դոլար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Շեն» ԲՀԿ առաջարկվող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է ՀՀ և ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունների, ինչպես նաև նշված մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • «Շեն» կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելություններ կատարեն ծրագրերի իրագործման վայրեր՝ աշխատանքների ընթացքը ստուգելու համար:<br>• Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհառու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում:<br>• Համաձայն ընդունված կարգի պարբերական հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1241 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 3.8-1/18969-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 02/7487-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 11-ի N ՖԲ/ԱնՄ-5/9353-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15303-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից 2014 թվականին իրականացվող՝ 452,800,000 դրամ ընդհանուր արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան
Ներկայացուցչության տնօրեն Ի. Մաղոյանի կողմից
.................................................
2-ը դեկտեմբերի 2013 թ.

**«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչության 2014թ հունվար-դեկտեմբեր ամիսների գործունեության ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Խթանել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հավասար պայմանները և աշխատանքի մատչելիությունը՝ որպես մարդու հիմնարար իրավունք: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Սեյվ դը չիլդրեն ԱՄՆ», «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» |
| 4 | Ծրագրի կատարողը | «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն<br>Ք. Երևան, Ազատության 27, ՀՎՀՀ 02251537 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի մարզեր և Երևան<br>Բնագավառը՝ մասնագիտական կրթություն, զբաղվածության խթանում |
| 6 | Ծրագրի բյուջեն | 452,800,000 ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրի անմիջական նպաստառուներն են ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի մարզերի և Երևան քաղաքի 800 հաշմանդամություն ունեցող անձինք |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ | Ծրագիրը ներառում է աշխատանքներ հետևյալ հիմնական ուղղություններով.<br>ա. Ծառայությունների համաձայնեցված փաթեթի հասանելիության և մատչելիության աճի ապահովում |

| | | |
|---|---|---|
| | ֆինանսական միջոցների ծավալը | հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈՒԱ) համար՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների անհատական գնահատման, հմտությունների զարգացման և աշխատանքի տեղավորման միջոցով:<br>բ. Հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթական և աշխատանքային ծառայությունների մատուցման որակի բարելավում՝ ծառայություն մատուցողների, ՀՈՒԱ հարցերով զբաղվող կազմակերպությունների, հանրային/մասնավոր ոլորտի աշխատակիցների և միջին-մասնագիտական կրթական հաստատությունների կարողությունների զարգացման և վերապատրաստման միջոցով:<br>գ. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության և աշխատանքային իրավունքների մատչելիության մասին հանրային իրազեկության բարձրացում՝ ԶԼՄ-ների և համաժողովների միջոցով:<br><br>Ստորև ներկայացված են ծրագրային աշխատանքների մանրամասները.<br><br>***<u>1. Ենթադրամաշնորհի տրամադրում «Ունիսոն» ՀԿ-ին</u>***<br>1.1Ե նթադրամաշնորհի «Ունիսոն» ՀԿ-ին՝ ՀՈՒԱ-ների մասնակցությամբ տեսա-թվային տեխնոլոգիաների ոլորտում սոցիալական ձեռնարկության ստեղծման նպատակով, որի արդյունքում առնվազն 15 ՀՈՒԱ կապահովվի երկարաժամկետ աշխատանքով Երևանում:<br><br>1.2 Ենթադրամաշնորհի շրջանակներում նաև կկազմակերպվեն ՀՈՒԱ-ների համար աշխատանքի պատրաստվածությանն ու կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ: Առնվազն 80 Երևանաբնակ ՀՈՒԱ մասնակցելով դասընթացներին կբարելավեն իրենց հնարավորությունները աշխատանքային շուկայում ներգրավվելու համար:<br><br>1.3 Ենթադրամաշնորհը ներառում է նաև Երևանի զբաղվածության կենտրոնների աշխատակիցների և գործատուների՝ ՀՈՒԱ-ների հետ աշխատելու հմտությունների զարգացում:<br><br>***<u>2. Ենթադրամաշնորհի տրամադրում «Լիարժեք Կյանք ՀԿ-ին՝</u>***<br>2.1 Ենթադրամաշնորհի «Լիարժեք Կյանք ՀԿ-ին ՀՈՒԱ-ների համար աշխատանքի պատրաստվածությանն ու կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների կազմակերպման նպատակով: Առնվազն 140 ՀՈՒԱ մասնակցելով դասընթացներին Լոռու և Գեղարքունիքի մարզերում կբարելավեն իրենց հնարավորությունները աշխատանքային շուկայում ներգրավվելու համար:<br><br>2.2 Ենթադրամաշնորհը ներառում է նաև նույն մարզերի զբաղվածության կենտրոնների աշխատակիցների և գործատուների՝ ՀՈՒԱ-ների հետ աշխատելու հմտությունների զարգացում:<br><br>***<u>3. Ենթադրամաշնորհի «ԷՅՉ ԴԻ ՓԻ հիմնադրամ» ՀԿ-ին</u>***<br>3.1 Ենթադրամաշնորհի «ԷՅՉ ԴԻ ՓԻ հիմնադրամ» ՀԿ-ին՝ ՀՈՒԱ-ների համար աշխատանքի պատրաստվածության |



| | | |
|---|---|---|
| | | ու կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների կազմակերպման նպատակով: Առնվազն 150 ՀՈՒԱ մասնակցելով դասընթացներին Արարատի և Շիրակի մարզերում՝ կբարելավեն իրենց հնարավորությունները աշխատանքային շուկայում ներգրավվելու համար:<br><br>3.2 Ենթադրամաշնորհը ներառում է նաև նույն մարզերի զբաղվածության կենտրոնների աշխատակիցների և գործատուների՝ ՀՈՒԱ-ների հետ աշխատելու հմտությունների զարգացում:<br><br>***<u>4. Փոքր դրամաշնորհների տրամադրում</u>*** առնվազն 12 ՀԿ-ների՝ Սյունիքի, Շիրակի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերում ու Երևանում՝ առնվազն 150 ՀՈՒԱ-ների համար սոցիալական ձեռնարկությունների ստեղծման և արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ոլորտներում աշխատատեղերի ապահովման նպատակով:<br><br>***<u>5. Սոցիալական տեսահոլովակի պատրաստում</u>*** երիտասարդ ՀՈՒԱ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ<br><br>***<u>6. Զբաղվածության կենտրոնների աշխատակիցների ձեռնարկի տպագրություն</u>***՝ ՀՈՒԱ-ների հետ աշխատելու սկզբունքների վերաբերյալ<br><br>***<u>7. Երևան քաղաքում սոցիալական ձեռնարկությունների հիմնում</u>*** բիզնես կառույցների հետ համագործակցությամբ՝ ֆիլմարտադրության և տպագրության ոլորտներում 16 ՀՈՒԱ-ների համար աշխատատեղերի ստեղծման և աշխատանքային պայմանների բարելավման նպատակով<br><br>***<u>8. Վանաձոր քաղաքում սոցիալական ձեռնարկության հիմնում</u>*** քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, որի արդյունքում կտրամադրվեն քաղաքի կանաչապատման և սանմաքրման մեքենա-սարքավորումներ, ինչպես նաև անվազն 12 ՀՈՒԱ կապահովվեն երկարաժամկետ աշխատանքով:<br><br>***<u>9. Սպիտակ քաղաքում սոցիալական ձեռնարկության հիմնում</u>*** քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, որի շրջանակներում նախատեսվում է ջերմոցային տնտեսության (ջերմոց և ենթակառույցներ) ստեղծում, առնվազն 12 ՀՈՒԱ-ների աշխատատեղերի ստեղծում և աշխատանքային պայմանների բարելավում: Ձեռնարկության արտադրանքը նախատեսվում է տրամադրել քաղաքի մանկապարտեզներին և ծերանոցին:<br><br>***<u>10. Ծրագրի թիրախ մարզերի 46 միջին մասնագիտական և արհեստագործական կրթական հաստատությունների հարմարեցում</u>*** ՀՈՒԱ կարիքներին, աշխատակազմի հմտությունների զարգացում և ՀՈՒԱ-ների համար մասնագիտական կրթության ապահովում |

Ընդամենը ըստ եռամսյակների պլանավորվում է իրականացնել հետևյալ ծախսերը (ՀՀ Դրամ).

| | Նկարագիր | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ենթադրամաշնորհ «Ունիսոն» ՀԿ-ին | 20,000,000 | 20,000,000 | 20,000,000 | 20,000,000 | 80,000,000 |
| 2. | Ենթադրամաշնորհ «Լիարժեք Կյանք ՀԿ-ին | 11,000,000 | 11,000,000 | 11,000,000 | 11,000,000 | 44,000,000 |
| 3. | Ենթադրամաշնորհ «ԷՅՁ ԴԻ ՓԻ հիմնադրամ» ՀԿ-ին | 11,000,000 | 11,000,000 | 11,000,000 | 11,000,000 | 44,000,000 |
| 4. | Փոքր դրամաշնորհների տրամադրում | 35,250,000 | 35,250,000 | 35,250,000 | 35,250,000 | 141,000,000 |
| 5. | Սոցիալական տեսահոլովակի պատրաստում երիտասարդ ՀՈՒԱ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ | | 1,200,000 | | | 1,200,000 |
| 6. | Զբաղվածության կենտրոնների աշխատակիցների ձեռնարկի տպագրություն | | 200,000 | | | 200,000 |
| 7. | Երևան քաղաքում սոցիալական ձեռնարկությունների հիմնում | 10,000,000 | 10,000,000 | 10,000,000 | 10,000,000 | 40,000,000 |
| 8. | Վանաձոր քաղաքում սոցիալական ձեռնարկության հիմնում | 4,000,000 | 4,000,000 | 4,000,000 | 4,000,000 | 16,000,000 |
| 9. | Սպիտակ քաղաքում սոցիալական ձեռնարկության հիմնում | 8,500,000 | 8,500,000 | 8,500,000 | 8,500,000 | 34,000,000 |
| 10. | Միջին մասնագիտական և արհեստագործական կրթական հաստատությունների հարմարեցում, աշխատակազմի հմտությունների զարգացում և ՀՈՒԱ-ների համար մասնագիտական կրթության ապահովում | 2,000,000 | 2,000,000 | 2,000,000 | 2,000,000 | 8,000,000 |
| | Ընդամենը | **101,750,000** | **103,150,000** | **101,750,000** | **101,750,000** | 408,400,000 |



**10 Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**

| Անվանումը | Միավոր | Քանակ | Միավորի արժեքը (ՀՀ դրամ) | Ընդամենը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| Ենթադրամաշնորհներ գործընկեր կազմակերպություններին | ընդամենը | | | 168,000,000 |
| Փոքր դրամաշնորհների տրամադրում | ընդամենը | | | 141,000,000 |
| Սոցիալական տեսահոլովակի պատրաստում | ընդամենը | | | 1,200,000 |
| Զբաղվածության կենտրոնների աշխատակիցների ձեռնարկի տպագրություն | ձեռնարկ | 100 | 2,000 | 200,000 |
| Սոցիալական ձեռնարկությունների հիմնում Երևան, Վանաձոր և Սպիտակ քաղաքներում | հատ | 6 | 16,333,333 | 90,000,000 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ՝* | | | | 408,400,000 |

**11 Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը**

- Սպասարկող աշխատակազմի աշխատավարձ – 20,000,000
- Գրասենյակային տարածքի վարձակալություն և սպասարկում – 15,900,000
- Հեռահաղորդակցության ծախսեր – 2,500,000
- Բենզին և մեքենայի սպասարկում – 6,000,000

Ընդամենը՝ **44,400,000**

**12 Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**

Ծրագրի իրականացման ընթացքում «Մեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչությունը կհամագործակցի ՀՀ Կրթության և գիտության, ՀՀ Աշխատանքի ու սոցիալական հարցերի, Պետական զբաղվածության ծառայություն գործակալություն, Բժշկա- սոցիալական փորձաքննություն գործակլություն, ՀԿ-ների, գործատուների, ինչպես նաև ծրագրում ընդգրկված հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների հետ:

**13 Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**

Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Սեյվ դը չիլդրեն ԱՄՆ» կազմակերպության կողմից, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: Ծրագրի իրականացումը համաձայնեցվում է ՀՀ կրթության և գիտության և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունների հետ՝ ըստ վերջիններիս հետ կնքված Փոխըմբռնման հուշագրի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1242 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 3/3.8-2/18843-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N ԴԴ/22/13519-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N ՎՄ/3-4/15227-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բելգիայի ՆԱՖ ասոցիացիայի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված ժելատինե դատարկ դեղապատիճները (3 տեղ, 36 կգ ընդհանուր քաշով, 2400 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 422 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓԵւՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:
2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1243 -Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/3.8-1/18959-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ՎՄ/3-4/15514-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի.Օ.ԷՅ.ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04600132) 2013 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արագածոտնի Արտենի համայնքի ջրագծի ներքին ցանցի անցկացման համար 6400 մետր խրամուղու մաքրման, հարթեցման և ավազալցման աշխատանքների իրականացում՝ 2,275,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1244 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 դեկտեմբերի 9-ի N 3/3.8-1/18908-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15291-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ 00804091) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» N Մ-803-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Ամարաս ՅՈՒՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00837047) 2013 թվականի նոյեմբերի 4-ին կնքված N ԿԱ-ՇՏԱՊՁԲ-13/08-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 2,007,547 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էկոմիքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01255701) 2013 թվականի նոյեմբերի 4-ին կնքված N ԿԱ-ՇՏԱՊՁԲ-13/08-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 1,375,850 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1245 -Ա
քաղ. Երևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-788-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/3.8-1/18907-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/ 15297-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի N Մ-788-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «411,666 դրամի չափով» բառերը փոխարինել «416,667 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1246 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի տնօրենի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N Յ/Թ-78 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա և դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի 8-րդ կետում «01.03.2013թ. – 31.12.2013թ.» բառերը փոխարինել «01.03.2013թ. – 30.03.2014թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1247 - Ա
(Որոշումն ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 20-ի նիստին)
քաղ. Երևան

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԱՍԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՏԱՍԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-1/19661-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/7714-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N ՖԲ/ԱնՄ-4/9609-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16065-13 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 01/15/5249-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,428,392 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տասը համայնքների մանկապարտեզների տասը նախադպրոցական մասնագետների համար կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 00064024) 2013 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված N WVA/GAV ADP/TR-14/002/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացների կազմակերպում՝ 3,428,392 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

23 դեկտեմբերի 2013թ.

**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների 10 մանկապարտեզների 10 նախադպրոցական մասնագետների համար երեխայակենտրոն և կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում**

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել և անցկացնել Գեղարքունիքի մարզի համայնքների թվով 10 մանկապարտեզների 10 նախադպրոցական մասնագետների համար երեխայակենտրոն և կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացներ |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության Թայվանի աջակցող գրասենյակ,<br>Վորլդ Վիժն Թայվան, 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան, հեռախոս՝ +886-2-2175-1995 |
| 4. | Ծրագիրը կատարողը | <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Գավառ<br>Բնագավառը՝ կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 3,428,392 (երեք միլիոն չորս հարյուր քսանութ հազար երեք հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 3, 4, 5, 7, 8, Սարուխանի թիվ 1, 2 , Գանձակի, Նորատուսի թիվ 1, 2 նախադպրոցական և մանկապարտեզային խմբերը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013թ.-ի դեկտեմբերի 2-ից - 2014թ-ի ապրիլի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2013 թ. դեկտեմբեր 2-ից մինչև 2014թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածում իրականացնել հետևյալ միջոցառումները՝<br>• Դասընթացների անցկացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ<br>• Վերապատրաստման I-ին փուլի (4 օր) իրականացում 10 մանկապարտեզներից 10 |
| | | նախադպրոցական մասնագետների համար<br>• 10 մանկապարտեզների 10 նախադպրոցական մասնագետների ուսումնական այցելություն նախադպրոցական տիպային հաստատություն<br>• Տեխնիկական և խորհրդատվական աջակցություն 10 մանկապարտեզների նախադպրոցական մասնագետներին<br>• Վերապատրաստման II-րդ փուլի (4 օր) իրականացում 10 մանկապարտեզներից 10 նախադպրոցական մասնագետների համար:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,428,392 (երեք միլիոն չորս հարյուր քսանութ հազար երեք հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել ”Քայլ առ քայլ” բարեգործական հիմնադրամի հետ: Պայմանագրի և հավելվածների պատճենները կցվում են: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը համագործակցելու է Գավառի թիվ 3, 4, 5, 7, 8, Սարուխանի թիվ 1, 2 , Գանձակի, Նորատուսի 1, 2 նախադպրոցական և մանկապարտեզային խմբերի ղեկավարության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի, Գավառի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Թայվանի գրասենյակի կողմից:<br><<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |



Շաղիկ Մարուխյան՝
<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի գործառնությունների ղեկավար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1248 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 20-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԵՔ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-1/19663-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/7710-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 03/07-1/15014-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16063-13 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 01/15/5251-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,753,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեք դպրոցներում աշակերտական խորհուրդների կարողությունների զարգացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 00064024) 2013 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված N WVA/GAV ADP/TR-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացների կազմակերպում՝ 3,753,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

23 դեկտեմբերի 2013թ.

**«Աշակերտական խորհուրդների կարողությունների զարգացում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեք դպրոցներում»**
**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել և անցկացնել Աշակերտական խորհուրդների կարողությունների զարգացման դասընթացներ Գեղարքունիքի մարզի 3 դպրոցներում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության Թայվանի աջակցող գրասենյակ,<br>հասցե՝ Վորլդ Վիժն Թայվան, 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան,<br>հեռախոս՝: +886-2-2175-1995 |
| 4. | Ծրագիրը կատարողը | <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի թիվ 4 հիմնական, Գավառ քաղաքի թիվ 7 և Լանջաղբյուրի միջնակարգ դպրոցներ:<br>Բնագավառը՝ կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝3,753,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի |
| 7. | Բարեգործություն ստացողը | Իրականացման վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց, Գավառ քաղաքի թիվ 7 միջնակարգ դպրոց և Լանջաղբյուրի միջնակարգ դպրոց: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013թ.-ի դեկտեմբերի 02-ից - 2014թ-ի հունիսի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2013թ.-ի դեկտեմբերի 02-ից մինչև 2014թ-ի հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում իրականացնել հետևյալ միջոցառումները՝<br>• Աշակերտական խորհուրդների (Ախ) ձևավորում և գործունեության կազմակերպման հմտությունների բարելավում. |



| | | |
|---|---|---|
| | | • Թիրախային դպրոցների Ախ-ի կողմից փոքրածավալ ծրագիր-առաջարկի մշակում և իրականացում.<br>• Ախ-ի ցանցի ձևավորում՝ բարձրացնելով անդամների գիտելիքների և հմտությունների մակարդակը՝ Ախ-ի ցանցի գործունեության պլանավորման, իրականացման, ինչպես նաև շահերի պաշտպանության գործընթացներում:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,753,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Քայլ առ քայլ" բարեգործական հիմնադրամի հետ: Պայմանագրի ընդհանուր գումարն է 3,753,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br>Պայմանագրի և հավելվածների պատճենները կցվում են: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը համագործակցելու է Գավառ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցի, Գավառ քաղաքի թիվ 7 միջնակարգ դպրոցի և Լանջաղբյուրի միջնակարգ դպրոցի տնօրինության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի, Գավառի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Թայվանի գրասենյակի կողմից:<br><<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Շաղիկ Մարուխյան՝
<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի գործառնությունների ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**27 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1249 - Ա**

**(Որոշումն ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 20-ի նիստին)**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԱՎԱՌԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԵՎ ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-1/19659-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/7713-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1/05/1361-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16064-13 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 01/15/5250-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 5,856,905 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի և Կարմիր գյուղի համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի մարզադաշտի մասնաշենքի տանիքների վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08416387) 2013 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N WVA/GAV ADP/CM-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տանիքների վերանորոգում՝ 5,856,905 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>>
միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն՝
Միքայր Էդիլյան

23 դեկտեմբերի 2013թ.

<< Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի "Գավառի մարզադպրոց" ՀՈԱԿ-ի և Կարմիր գյուղ համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի մարզադաշտի մասնաշենքի տանիքների վերանորոգում >>

Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է մատակարարել որոշակի շինանյութեր Գավառի տարածքային զարգացման ծրագրի (ՏԶԾ) տարածքում գտնվող "Գավառի մարզադպրոց" ՀՈԱԿ-ի և Կարմիր գյուղ համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի մարզադաշտի մասնաշենքի տանիքները վերանորոգման համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության Թայվանի աջակցող գրասենյակ, Վորլդ Վիժն Թայվան, 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան, հեռախոս՝: +886-2-2175-1995 |
| 4. | Ծրագիրը կատարողը | <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը *Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, քաղաք Գավառ և Կարմիր գյուղ համայնք: Բնագավառը՝ կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ է 5,856,905 (հինգ միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր հինգ) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գեղարքունիքի մարզի "Գավառի մարզադպրոց" ՀՈԱԿ և Կարմիր գյուղ համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոց |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013թ.-ի դեկտեմբերի 11-ից – դեկտեմբերի 28-ը |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում մատակարարել որոշակի շինանյութեր Գավառի տարածքային զարգացման ծրագրի (ՏԶԾ) տարածքում գտնվող "Գավառի մարզադպրոց" ՀՈԱԿ-ի և Կարմիր գյուղ համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի մարզադաշտի մասնաշենքի տանիքները վերանորոգման համար: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5,856,905 (հինգ միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր հինգ) ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում շինանյութեր մատակարարելու համար պայմանագիր է կնքվել "ԴԵԼՏԱ-ԻՆՏԵԳՐԱԼ" ՍՊԸ-ի հետ: Պայմանագրի ընդհանուր գինն է 5,856,905 (հինգ միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր հինգ) ՀՀ դրամ: Պայմանագրի և հավելվածների պատճենները կցվում են: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը համագործակցելու է "Գավառի մարզադպրոց" ՀՈԱԿ-ի և Կարմիր գյուղ համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի, Գավառի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Թայվանի գրասենյակի կողմից: <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Շաղիկ Մարուխյան՝
<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունների ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1250 - Ա
քաղ. Երևան

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-2/19463-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ԴԴ/22/13788-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15863-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից HAY-MED բարեգործական ասոցիացիայի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության հասցեով ստացված էխոգրաֆի իր լրակազմով (1 տեղ, 161 կգ ընդհանուր քաշով, 7525.08 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ընդհանուր ծախսերը կազմել են 483 եվրո դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1251 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՍՅՈՒՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-2/19455-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՖԲ/ԱռՄ-4/9586-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15885-13 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ամերիկայի միացյալ հայկական ֆոնդի կողմից «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (428 տեղ, 3570 կգ ընդհանուր քաշով, 101938 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմում են 7513 ԱՄՆ-ի դոլար, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռն ամբողջովին հանձնվելու է Հայ Առաքելական եկեղեցու Վայոց ձորի թեմին՝ Վայոց ձորի թեմին պատկանող «Սիրանուշ» ամառային ճամբարում օգտագործելու համար:

2. «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1252 - Ա**

**(Որոշումն ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 20-ի նիստին)**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N 3/3.8-2/20043-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16096-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Գևորգ Դանիելյանի կողմից Հայաստանի Հանրապետության երկրապահ կամավորականների միության հասցեով ստացված կտորի, բրեզենտե գործվածքի և մարզական գորգերի (132 տեղ, 2730 կգ ընդհանուր քաշով, 19906 ԱՄՆ-ի դոլար արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1500 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռն օգտագործվելու է «Պատանի երկրապահ» ակումբի անդամների համազգեստ կարելու և ուսումնամարզական պարապմունքները կազմակերպելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության երկրապահ կամավորականների միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1253 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-2/19458-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ԴԴ/22/13912-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16070-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պյուռ հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը և գլյուկոզայի որոշման ախտորոշիչ ստրիպերը (3 տեղ, 34.50 կգ ընդհանուր քաշով, 17002.50 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 410 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓԼւՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1254-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1064-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/19367-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15818-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 21-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Պողոսյան կրթահամալիր» ծրագրի մասին» N Մ-1064-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Իգիթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05801607) 2013 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N 03/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կաթնամթերքի մատակարարում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1255 - Ա**
**քաղ. Երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-172-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-1/19519-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16074-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-172-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2012 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը (2013 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1 Լրացուցիչ համաձայնագրի խմբագրությամբ), որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը փոստային ծառայությունների մատուցում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1256 - Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-177-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-1/19520-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16075-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2012 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը (2013 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1 Լրացուցիչ համաձայնագրի խմբագրությամբ), որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը փոստային ծառայությունների մատուցում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**24 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1257 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 20-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 3/3.8-1/19762-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N ՎՄ/3-4/16090-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2012 թվականի նոյեմբերի 15-ի N Մ-919-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Հանքոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04716703) 2013 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված N 24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում՝ 5,857,960 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1258 - Ա**

**(Որոշումն ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 20-ի նիստին)**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 դեկտեմբերի 19-ի N 3/3.8-1/19764-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N ՎՄ/3-4/16136-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ 00804091) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» N Մ-803-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Թերմոսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02583731) 2013 թվականի նոյեմբերի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է օդափոխության համակարգի փոփոխություն՝ 825,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1259 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-1/19665-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N ԴԴ/22/13978-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16056-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշման անվանման մեջ, 1-ին կետում և որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2009-2013 թթ» բառերը փոխարինել «2009-2014թթ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1260 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԼՈՌՎԱ ԼՈՒՅՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-2/18535-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15299-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Միացյալ Նահանգներից CIS զարգացման հիմնադրամի միջոցներով «Լոռվա Լույս» բարեգործական միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (442 արկղ, 9,362 կգ ընդհանուր քաշով, 11,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,400 ԱՄՆ-ի դոլար, Գուգարքի տարածաշրջանային մաքսատուն, ցանկը կցվում է) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը տրամադրվելու է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

2. «Լոռվա Լույս» բարեգործական միություն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## N TGHU4753139 Բեռի բեռնարկղի և բաշխման ցանկ 16/9.7

| № | Ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Արժեքը /Ամն դոլար/ | Քաշ /ընդհանուր/ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Սպորտային հագուստ | արկղ | 48 | 550.00 | 552 |
| 2 | Հագուստ՝ Բաճկոն, բանվորական հագուստ | արկղ | 2 | 550.00 | 305 |
| 3 | Մազի ներկ | արկղ | 1 | 275.00 | 219 |
| 4 | Ամառային կոշիկ | արկղ | 2 | 550.00 | 371 |
| 5 | Կանացի կոշիկ | արկղ | 4 | 1,100.00 | 789 |
| 6 | Մազի հարդարման պարագաներ | արկղ | 48 | 1,100.00 | 557 |
| 7 | Կանացի բլուզ | արկղ | 140 | 275.00 | 154 |
| 8 | Մանկական ձմեռային կոշիկ | արկղ | 7 | 275.00 | 97 |
| 9 | Կանացի կոշիկ տարբեր | արկղ | 27 | 550.00 | 504 |
| 10 | Հագուստ՝ կանացի, տղամարդու, մանկական | արկղ | 4 | 550.00 | 234 |
| 11 | Հողաթափ կանացի, տղամարդու | արկղ | 1 | 275.00 | 146 |
| 12 | Կանացի ներքնաշոր | արկղ | 1 | 275.00 | 214 |
| 13 | Սպորտային բլուզներ | արկղ | 1 | 275.00 | 212 |
| 14 | Կանացի պայուսակներ | արկղ | 3 | 825.00 | 507 |
| 15 | Կանացի երկարաճիտք կոշիկներ | արկղ | 1 | 275.00 | 192 |
| 16 | Սպորտային կոշիկներ | արկղ | 76 | 2,040.00 | 1129 |
| 17 | Բժշկական հագուստ | արկղ | 24 | 275.00 | 505 |
| 18 | Մանկական հագուստ | արկղ | 1 | 275.00 | 193 |
| 19 | Մոմեր | արկղ | 2 | 350.00 | 1673 |
| 20 | Շապիկներ | արկղ | 21 | 350.00 | 671 |
| 21 | Մանկական կոստյումներ | արկղ | 8 | 10.00 | 138 |
|  | Ընդամենը |  | 422 | 11,000.00 | 9362 |

Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 11000 ԱՄՆ դոլար, իսկ տրանսպորտային ծախսերը կազմում են 3400 Ամն դոլար:

N TGHU4753139 բեռնարկղով բեռի բաշխման շահառու է հանդիսանալու ՀՀ Պաշտպանության նախարարությունը:

<<ԼՈՌՎԱ ԼՈՒՅՍ>>ԲՄ ՀԿ նախագահ                    Արուս Զալինյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1261 - Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-2/19508-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16073-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել Կանադայի Հայ ավետարանչական ընկերակցության կողմից Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հասցեով ուղարկված միանգամյա ինքնատաքացվող միջատակի (11 տեղ, 80 կգ ընդհանուր քաշով, 2,450 կանադական դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,006.00 կանադական դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսվում է տրամադրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1262-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19303-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N ԴԴ/22/13740-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N ՎՄ/3-4/15608-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Մեծ Բրիտանիայից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 1 տեղ, 392 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 58.77 եվրո, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1263 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**

(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19314-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N ԴԴ/22/13751-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N ՎՄ/3-4/15610-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (ցանքսի իրականացման համար Լևենշտեյնի միջավայր (թեսթ)՝ 1 տեղ, 1,34 կգ ընդհանուր քաշով, 101,8 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1264-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 26-ի N 3/3.8-2/18006-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 27-ի N ՎՄ/3-4/14734-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի իմակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է);

2. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված բեռը՝ հավաքովի տնակի շինարարական մասեր՝ իր բոլոր ներքին հարդարման և խոհանոցային պարագաներով (114 տեղ, 21,487.37 եվրոյին համարժեք դրամ արժեքով, 10,113 կգ ընդհանուր քաշով, փոխադրման ծախսերը կազմել են 5,100 եվրո, ցանկը կցվում է, «Շիրակի» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Անահիտ Մխոյանի կողմից
«26» հունիսի 2012թ.

## «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի եւ տեղեկատվության կենտրոնի կառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կառուցել հաշմանդամների համար նախատեսված կենտրոն, որը կունենա բոլոր անհրաժեշտ պայմանները նպաստելու բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների ինտեգրացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով ստանալ Ավելացված Արժեքի Հարկից և մաքսային տուրքերից ազատման արտոնություն |
| 3. | Բարեգործը | Կարիտաս Ավստրիա՝ Wichnergasse 22, A-6800 Feldkirch, Austria |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ավստրիական Կարիտաս համագործակցությամբ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի (Գյումրի, Հ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն, ՀՎՀՀ՝ 05514397), ինչպես նաեւ ավստրիական և հայկական շինարարական կազմակերպությունների: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Պ.Սևակ 23<br>բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ողջ կառուցապատման համար նախատեսված է 1,075,200,000 ՀՀ դրամ գումար, որից առաջին տարվա համար՝ հուլիս-դեկտեմբեր 2012՝ 55,000,000 ՀՀ դրամ, երկրորդ, 2013, տարվա համար՝ 140 640 000 ՀՀ դրամ, իսկ մնացած 879 560 000 ՀՀ դրամ գումարը՝ հունվար-դեկտեմբեր 2014-ի համար: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ «Բազմակի հաշմանդամությամբ երեխաների ցերեկային խնամքի կենտրոն» ծրագրում ներգրավված 100 բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաներ/երիտասարդներ և նրանց ընտանիքների 400 անդամներ: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի նպատակն է կառուցել հաշմանդամ անձանց համար խնամքի եւ տեղեկատվության կենտրոն, որը կպատկանի Հայկական Կարիտասին եւ կօգտագործվի հաշմանդամություն ունեցող անձանց եւ նրանց ընտանիքներին տեղեկատվություն եւ առօրյա խնամք ապահովելու համար: Շենքի շահագործման ծրագիրը կուղարկվի բարեգործական հանձնաժողովի հաստատմանը շենքի կառուցման աշխատանքների ավարտից հետո:<br><br>Նախատեսվում է կառուցապատել 2.55 հա տարածք, որն ամբողջությամբ տրամադրվելու է հաշմանդամ երեխաներին, նրանց կարիքներին, վերականգնողական գործընթացներին և շրջակա միջավայրի հետ հաղորդակցության բարելավմանը:<br>Ծրագրի իրկանացման համար նախատեսված գումարը կազմում է 1,075,200,000 ՀՀ դրամ, որը պետք է ծախսվի վերը նշված երեք փուլերի ընթացքում: |

| | | |
|---|---|---|
| 9. | Ծրագրի իրականացման տևողությունը | հուլիս 2012- 20 դեկտեմբեր 2014թթ. |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ապրանքների ձեռք բերում և ներմուծում՝<br>• Հողային և բետոնացման աշխատանքներ (ներառյալ ճարտարապետական և շինարարական աշխատանքները)՝ 460,800,000 ՀՀ դրամ, որից կառույցի կառուցվածքային բլոկերի ներմուծում – 244,000,000, իսկ հողային և բետոնացման աշխատանքներ – 216,800,000 ՀՀ դրամ<br>• Տեխնիկական համակարգերի ներմուծում՝ 256,000,000 ՀՀ դրամ,<br>• Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ՝ 163,840,000 ՀՀ դրամ, որից արտաքին հարդարման աշխատանքներ – 50,000,000 ՀՀ դրամ, իսկ ներքին և արտաքին հարդարման համար անհրաժեշտ շինանյութերի և ապրանքների ներմուծում – 113,840,000 ՀՀ դրամ<br>• Օժանդակ կառույցներ և կանաչապատում՝ 143,360,000 ՀՀ դրամ<br>• Տեխնիկական եւ հեղինակային վերահսկողություն՝ 20,480,000 ՀՀ դրամ:<br><br>Առաջին փուլի շինարարական աշխատանքներն իրականցնելու է «Ախուրյան ԿՈՈՊՇԻՆ» ՍՊԸ: Աշխատանքների արժեքը առանց ԱԱՀ կազմում է 4.200.120 ՀՀ դրամ առանց ԱԱՀ:<br>Երկրորդ փուլի շինարարական աշխատանքներն իրականացնելու է «Կանակա» ԲԲԸ: Աշխատանքների արժեքը կազմում է 150,995,014 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Հորատման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 10.800.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ և իրականացվելու է «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի կողմից:<br>Տեխնիկական վերահսկողության համար Ա/Ձ Մ.Մելքոնյանին կվճարվի 1.962.940 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, իսկ հեղինակային վերահսկողության համար՝ «Մ.Ա.Փ.-Դիզայն» ՍՊԸ-ին 603.980 ՀՀ դրամ առանց ԱԱՀ գումարով: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպական ծախսերը կազմում են 30,720,000 ՀՀ դրամ<br>1. Գրասենյակային ծախսեր՝ 14,080,000 ՀՀ դրամ<br>2. Աշխատավարձ՝ 7,680,000 ՀՀ դրամ<br>3. Անուղղակի ծախսեր՝ 8,960,000 ՀՀ դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Անմիջական համագործակցություն կիրականացվի ՀՀ Աշխատանքի եվ Սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի, ինչպես նաև շինարարական կազմակերպությունների հետ : |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Վարչական Խորհուրդը:<br>Առաջին փուլի տեխնիկական և հեղինակային վերահսկողությունը իրականացնելու է «ԵՐԱՆԳ» ՍՊԸ-ն (ք. Գյումրի Իսահակյան փ.3-53, ՀՎՀՀ 05507067):<br>Երկրորդ և երրորդ փուլերի տեխնիկական վերահսկողությունը կիրականացնի Ա/Ձ Մ.Մելքոնյանը (ք.Գյումրի, Երևանյան խճ. 5 շ., բն. 75, ՀՎՀՀ՝ 52173748), իսկ հեղինակային վերահսկողությունը՝ «Մ.Ա.Փ.-Դիզայն» ՍՊԸ (ք.Երևան, Այգետան 9 փող, 31ա, ՀՎՀՀ՝ 01542832):<br>Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին և Ավստրիական Կարիտասին: |

16/9.15

# ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ

2013/22/8916 փոխադրման ամփոփագրով

ներմուծված ապրանքների

| N | Ապրանքի անվանում | Տեղ | Նետտո (կգ) | Բրուտտո (կգ) |
|---|---|---|---|---|
| 1 | Պլաստիկ խողովակներ և կցամասեր | 16 | 6050 | 6077 |
| 2 | Բիտումային ծածկի շինանյութ | 24 | 915 | 935 |
| 3 | Հիմքերի պլաստիկ մեկուսիչներ | 32 | 480,5 | 480,5 |
| 5 | Մետաղափայտա շինմոնտաժային կոնստրուկցիաներ | 3 | 395 | 400 |
| 6 | Ձեռքի շինարարական գործիքներ | 4 | 148 | 153 |
| 7 | Էլեկտրական մալուխներ(պղինձ) | 18 | 1200 | 1286,5 |
| 8 | Անվասայլակներ | 3 | 45 | 45 |
| 9 | Ջրա և ջերմա-մեկուսիչ փրփրապլաստ | 14 | 733 | 736 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 114 | 9948,5 | 10113 |

Մասնացուցակը կազմեց ՆՀՎ Շիրակի Բաժնի մաքսային տեսուչ Վ. Միրզոյանը:

16/9.15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1265-Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N ԱՔ/15-1/13322 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 3/3.8-1/18813-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15292-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Ա/Ձ Հայկ Գևորգյանի հետ (ՀՎՀՀ՝ 25334149) 2013 թվականի նոյեմբերի 27-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԳՀ ԲԸԱՀԱՊՁԲ-13/26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 2 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքի ձեռքբերում՝ 560,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1266 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1130-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ** («Փրկություն հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N 3.8-1/18816-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15290-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1130-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է);

2. Սահմանել, որ «Փրկություն հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գիմաս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02549702) 2012 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի լիցքավորման սպասարկման ծառայությունների մատուցում՝ 784,600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված՝ N 290180 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 240.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Նժդեհ» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի մարտի 23-ին կնքված՝ N 010192633 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 360.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2006 թվականի հունիսի 1-ին կնքված՝ N 101 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 120.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևան ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N Ա-018.08.13.3121 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 1.100.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն»
բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ
Արփինե Աբրահամյան

29 նոյեմբերի 2013թ.

# ԾՐԱԳԻՐ

Աջակցություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության մտավոր խնդիրներ ունեցող երեխաների և երիտասարդների ցերեկային խնամքի կենտրոնին

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ստեղծել նպաստավոր պայմաններ «Մտավոր խնդիրներ ունեցող երեխաների և երիտասարդների ցերեկային խնամքի կենտրոն» հաճախող շահառուների համար՝ կազմակերպելով նրանց խնամքը և առօրյա զբաղվածությունը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգից Ջորջ Պետրոսի Աբելյան- 4.132.000դրամ,<br>ԱՄՆ Բոստոնի նահանգից քաղ. Ջոն Կաֆայան-տարեկան 1.160.000դրամ,<br>Գերմանական Կարմիր Խաչի հայաստանյան գրասենյակ- 1.708.000դրամ, |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Չեխովի 33, մուտքը Մանանդյան փողոցից), ՀՎՀՀ 02219597 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Քաղ. Երևան, Շենգավիթ համայնք, Մտավոր խնդիրներ ունեցող երեխաների և երիտասարդների ցերեկային խնամքի կենտրոն, սոցիալական բնագավառ, բարեգործական հասարակական կազմակերպություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2012-2014թթ-ի համար-21.001.800 դրամ<br>2012-ի համար – 7.000.600 դրամ<br>2013-ի համար - 7.000.600 դրամ<br>2014-ի համար - 7.000.600 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | 55 մտավոր խնդիրներ ունեցող երեխաներ և երիտասարդներ, ովքեր հաճախում են ցերկային խնամքի կենտրոն<br>438 ՀԿ-ում անդամագրված հաշմանդամ երեխաներ և երիտասարդներ<br>Ընդամենը՝ 493 հաշմանդամներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 3 տարի՝ 2012թ. հունվարի 1-ից մինչև 2014թ դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Փրկություն» ՀԿ-ի ծրագրերի իրականացման համար Շենգավիթի թաղապետարանը ավագանու 18.12.1999թ. թիվ 30 որոշմամբ թիվ 146 /նախկին 298/ մսուր-մանկապարտեզի ընդհանուր տարածքից անվարձահատույց հատկացրել է 700քառմ. տարածք: |



| | | |
|---|---|---|
| | | ՀԿ-ն 1999թ-ից ստեղծել է մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների համար ցերեկային խնամքի և առօրյան կազմակերպող միակ օրինակելի կենտրոնը, ուր ամեն օր Երևանի տարբեր համայնքներից հաճախում են շուրջ 55 շահառուներ: Կենտրոնում ժ.10.$^{00}$-17.$^{00}$-ը նրանց համար ըստ անհատական պլանի տարբեր խմբակներում կազմակերպվում է ուսուցում՝<br>•տարրական գրաճանաչություն և թվաբանություն<br>• ձեռագործության տարբեր ոճեր, մաքրամե և ապլիկացիա,<br>•նկարչություն և բրնձագործություն,<br>•կավագործություն,<br>•գեղագիտական ձևավորում,<br>•համակարգչային տարրական գրագիտություն<br>• ֆիզդաստիարակություն,<br>•թատերական և տիկնիկային:<br>Խմբակների տարեկան ծախսերը կազմում են շուրջ 231.000դրամ, որի մեջ ներառված չեն տարվա ընթացքում խմբակներին անհրաժեշտ պարագաների և գրենական պիտույքների նվիրատվությունները:<br>Կենտրոնում մատուցվում են բազմամասնագիտական ծառայություններ անհատական և խմբային պարապմունքների տեսքով:<br>Բազմամասնագիտական թիմի կողմից պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ընտանիքի անդամների հետ, որոնք նպաստում են կենտրոն-շահառու-ընտանիք կապի ամրապնդմանը:<br>Շահառուները մեկ անգամ սնվում են, որն օգնում են կազմակերպել Գերմանական Կարմիր խաչի հայաստանյան գրասենյակը և տարբեր բարերարներ: Սննդի տարեկան արժեքն է կազմում շուրջ 1.708.000դր:<br>Պարբերաբար կազմակերպվում են ներքաղաքային և միջքաղաքային էքսկուրսիաներ, որոնց նպատակն է կենդանի քարոզարշավի, տարբեր միջոցառումների միջոցով շահառուներին ինտեգրել հասարակություն:<br>Ցերեկային խնամքի կենտրոնը պրակտիկայի անցկացման բազա է դարձել Երևանի Պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի և Խ.Աբովյանի անվան Պետական Մանկավարժական համալսարանի Նախադպրոցական, սկզբնական և հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողների համար:<br>«Փրկություն» ՀԿ-ն իրականացնում է ևս 2 ծրագրեր. |

| | | |
|---|---|---|
| | | **Բուժմիջնորդավորում**, անվճար ատամնաբուժական ծառայություն, որ օգտվում են 493 շահառուները և նրանց ընտանիքի անդամները, իրականացվում է աչքի պրոթեզավորում, դեղորայքի և բուժպարագաների հատկացում, որոնց տարեկան ծախսերը կազմում են շուրջ 1.242.000դրամ:<br>**Սոցիալ-մշակութային ծրագիր**, Երեխաների պաշտպանության օրվա՝ Հունիսի 1-ին և Դեկտեմբերի 3-ին՝ Հաշմանդամների միջազգային օրերի կապակցությամբ շահառուներին տրվում են նվերներ և հումանիտար օգնություն: Նշված ծրագրի տարեկան ծախսերը կազմում են շուրջ 1.215.000դրամ:<br>Բուժմիջնորդավորման և սոցիալ-մշակութային ծրագրերը իրականացվում են տարբեր կազմակերպությունների կողմից կատարված նվիրատվություն-ների միջոցով:<br>Ցերեկային խնամքի կենտրոնի տարեկան ծախսերը կազմում են 7.000.600 դրամ, սակայն գերխնդիր է կոմունալ, սպասարկման և գրենական պիտույքների ծախսերը, որոնք տարեկան կազմում են շուրջ 2.604.600 դրամ, որոնց համար խնդրում ենք հարկային արտոնություններ:<br>1. Էլեկտրաէներգիա - տարեկան 360.000րամ-2012-2013թթ, իսկ 2014թ-240.000դրամ,<br>2. Ջուր - տարեկան 216.000դրամ-2012-2013թթ, իսկ 2014թ-120.000դրամ,<br>3. Հեռախոս - տարեկան 600.000 դրամ-2012-2013թթ, իսկ 2014թ-360.000դ,<br>4. Գազ /ջեռուցում/- տարեկան 1.210.000 դրամ-2012-2013թթ, իսկ 2014թ-1.100.000դրամ,<br>5. Գազի սպասրկում – տարեկան 38.600 դրամ:<br>6. Գրենական պիտույքներ – տարեկան 180.000 դրամ:<br>7. Բնական գազի լիցքավորում – միկրոավտոբուս – 2014թ. 784.600դր. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Էլեկտրաէներգիա - տարեկան 360.000րամ-2012-2013թթ, իսկ 2014թ-240.000դրամ,<br>2. Ջուր - տարեկան 216.000դրամ-2012-2013թթ, իսկ 2014թ-120.000դրամ,<br>3. Հեռախոս - տարեկան 600.000 դրամ-2012-2013թթ, իսկ 2014թ-360.000դ,<br>4. Գազ /ջեռուցում/- տարեկան 1.210.000 դրամ-2012-2013թթ, իսկ 2014թ-1.100.000դրամ, |



| | | |
|---|---|---|
| | | 5. Բնական գազի լիցքավորում – միկրոավտոբուս – 2014թ.- 784.600դր.<br>Ընդամենը մեկ տարվա համար 2.604.600 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 2012-2014թթ. ծրագրի իրականացման համար ծախսերը կազմում են 2.340.000 դրամ,<br>• Հեռախոս-1.800.000 դրամ,<br>• գրենական պիտույքներ – 540.000դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարություն ,<br>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով,<br>Երևանի քաղաքապետարան,<br>Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ,<br>Գերմանական Կարմիր Խաչի հայաստանյան գրասենյակ,<br>Ծրագիրը ֆինանսավորող բարեգործներ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ հաշվետվությունների ներկայացում,<br>ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարություն,<br>Երևանի քաղաքապետարան,<br>Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ,<br>Ծրագիրը ֆինանսավորող բարեգործներ: |

Ծրագրի ղեկավար՝        Ա.Խաչատրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1267 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-2/18995-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի N ՎՄ/3-4/15391-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Նիդերլանդներից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ տեսախցիկ (մեկ տեղ, 8 կգ ընդհանուր քաշով, 10.260 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է և անհատույց հանձնվելու է «Շողակաթ» հեռուստաընկերությանը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**20 դեկտեմբերի ի 2013 թվականի N Մ- 1268 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 3/3.8-2/18545-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N ՎՄ/3-4/15347-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը՝ ամրան (14 տեղ, 57.126 կգ ընդհանուր քաշով, 34,451 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,164.000 դրամ, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ. Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում: Ամրանն օգտագործվելու է նշված ծրագրի շրջանակներում կառուցվող մանկական գեղագիտական կենտրոնի շինարարության մեջ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1269 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱԲ - ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 11-ի N 3/3.8-2/19140-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ՖԲ/ԱնՄ-4/9492-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ՎՄ/3-4/15515-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայից՝ «All KURIER GMBH» հասարակական կազմակերպության միջոցներով «Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ – կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի՝ հագուստ, ակնոցներ և գրենական պիտույքներ (մեկ տեղ, 5.5 կգ ընդհանուր քաշով, 950.46 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓԿԱՍՓԱՄ Մ/Տ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է և անհատույց հանձնվելու է N 14 դպրոցի տեսողական խանգարում ունեցող սաներին:

2. «Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ – կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1270 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N Մ-467-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 3/3.8-1/18797-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/-15295-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-467-Ա (2013 թվականի հուլիսի 19 Մ-606-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02703411) 2013 թվականի նոյեմբերի 27-ին կնքված N Ա-54 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անցկացնել «Կառուցենք տեղական համայնքներ Հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի աուդիտ 01.06.2012-30.11.2013 թթ. ժամանակահատվածի համար, ներկայացնել աուդիտորական եզրակացություն հայերենով և անգլերեն լեզվով՝ 1,885.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1271 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N Մ-467-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 11-ի N 3/3.8-1/18815-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎՄ/3-4/15294-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-467-Ա (2013 թվականի հուլիսի 19 Մ-606-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-962-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հոթել Ալվա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03011896) 2013 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք տեղական համայնքներ Հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Ծաղկաձորում անցկացվելիք 2-օրյա սեմինարի մասնակիցների գիշերակացի, սննդի, սուրճի ընդմիջման և դահլիճի ապահովում՝ 217.800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1272 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ԿԻՑ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՃԱՂԱՇԱՐԻ, ԴԱՐՊԱՍՆԵՐԻ ԵՎ ԴՌՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-1/19359-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 02/7659-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15815-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 34,509,150 դրամ արժողությամբ «Արշիլ Գորկու թանգարանին կից մետաղական ճաղաշարի, դարպասների և դռնակների տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռոբերտ Գրիգորյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 52193855) 2013 թվականի նոյեմբերի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արշիլ Գորկու թանգարանին կից մետաղական ճաղաշարի, դարպասների և դռնակների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 34,509.150 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«01» դեկտ. 2013 թ.

Արշիլ Գորկու թանգարանին կից մետաղական ճաղաշարի, դարպասների եւ դռնակների տեղադրման աշխատանքների ծրագիր

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է տեղադրել մետաղական ճաղաշար, դարպասներ և դռնակներ Արշիլ Գորկու թանգարանում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/Հոգեւոր-քաղաքաշինական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 34,509,150 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հավատացյալ ժողովուրդը և միաբանությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 26 նոյեմբերի 2013թ. – 01 ապրիլի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Արշիլ Գորկու թանգարանում շինարարական աշխատանքներ<br>Աշխատանքներն իրականացվում է՝<br>Ա/Ձ Ռոբերտ Գրիգորյան, (ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն, 2 թաղ., 33 շենք, 34 բն. ՀՎՀՀ 52193855) կողմից, պայմանագիր՝10Շ/013, կնքված 26.11.2013թ, 34,509,150 ՀՀ դրամ գումարով առանց ԱԱՀ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է տեղադրել մետաղական ճաղաշար, դարպասներ և դռնակներ Արշիլ Գորկու թանգարանում՝ 34,509,150 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1273 - Ա**
**քաղ. Երևան**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-1/19356-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 02/7658-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15797-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 100,164,510 դրամ արժողությամբ «Մայր Տաճարի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2013 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված N 05Շ/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իր ուժերով, միջոցներով և նյութերով կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նորոգման և վերականգման նախապատրաստական փուլի աշխատանքներ՝ 43,924.510 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2013 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N 02Ն/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման, ամրակայման նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացում՝ 56.240.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«06» դեկտեմբերի 2013 թ.

Մայր Տաճարի վերանորոգման

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կատարել Մայր Տաճարի վերանորոգման, ամրակայման, նախագծային և հետազոտական ու Մայր Տաճարի նորոգման եւ վերականգնման արտաքին աշխատանքների կազմակերպման նախապատրաստական փուլի աշխատանքներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հոգևոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | 100,164,510 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հավատացյալ ժողովուրդը և միաբանությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 22 հոկտեմբերի 2013թ. – 30 ապրիլի 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Տաճարի վերանորոգման, ամրակայման, նախագծային և հետազոտական ու Մայր Տաճարի նորոգման եւ վերականգնման արտաքին աշխատանքների կազմակերպման նախապատրաստական փուլի աշխատանքներ՝ 100,164,510 ՀՀ դրամ գումարով:<br>Աշխատանքները իրականացվում է՝<br>1. <<Հորիզոն-95>> ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Ա. Ավետիսյան 118, ՀՎՀՀ 00801721) կողմից, պայմանագիր՝02Ն/013, կնքված 22.10.2013թ, 56,240,000 ՀՀ դրամ գումարով,<br>2. <<Հորիզոն-95>> ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Ա. Ավետիսյան 118, ՀՎՀՀ 00801721) կողմից, պայմանագիր՝ 05Շ/13, կնքված 28.10.2013թ. 43,924,510 ՀՀ դրամ գումարով: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կատարել Մայր Տաճարի ամրակայման, վերանորոգման, հետազոտական ու Մայր Տաճարի նորոգման եւ վերականգնման արտաքին աշխատանքների կազմակերպման նախապատրաստական փուլի աշխատանքներ՝ 100,164,510 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1274 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՄՅԱՆ ԽՑԵՐԻ ՀԱԿԱՍԱՌԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-1/19354-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 02/7661-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15809-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 3,578.400 դրամ արժողությամբ «Երեմյան խցերի հակասառեցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529731) 2013 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված N 09Շ/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իր ուժերով, միջոցներով և նյութերով կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երեմյան խցերի հակասառեցման համակարգերի տեղադրման աշխատանքներ՝ 3,578.400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«06» դեկտ. 2013 թ.

Երեմյան խցերի հակաասռեցման համակարգերի տեղադրման աշխատանքների

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն տեղադրել հակաասռեցման համակարգեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երեմյան խցերում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/քաղաքաշինական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,578,400 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայրավանքի պաշտոնեությունը և միաբանությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 04 դեկտեմբերի 2013թ. – 04 մարտի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է տեղադրել հակաասռեցման համակարգեր Երեմյան խցերում ՝ 3,578,400 ՀՀ դրամ գումարով:<br>Աշխատանքներն իրականացվում է՝ <<Կարին>> ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 54/1,39, ՀՎՀՀ 02529731) կողմից, պայմանագիր՝09Շ/13, կնքված 04.12.2013թ, 3,578,400 ՀՀ դրամ գումարով, |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է տեղադրել հակաասռեցման համակարգեր Երեմյան խցերում՝ 3,578,400 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1275 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՍԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկեմբերի 13-ի N 3/3.8-1/19334-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկեմբերի 18-ի N 02/7657-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15810-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 72.000.000 դրամ արժողությամբ «Սևանի Վազգենյան դպրանոցի սաների ուսումնակրթական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, Սևան, Նալբանդյան 59, ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մայիսի 5-ին կնքված N 78 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում (01 հունվար 2013թ.-31 դեկտեմբեր 2014թ)՝ 20.000.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի Սևանի ԳԳՄ-ի հետ (ՀՀ, Սևան, Նաիրյան 154, ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի մայիսի 16-ին կնքված N 14104063118 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի մատակարարում (01 հունվար 2013թ.-31 դեկտեմբեր 2014թ)՝ 25.000.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, Սևան, Չարենցի 4, ՀՎՀՀ՝ 08603531) 2008 թվականի օգոստոսի 21-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հացի և հացամթերքի մատակարարում (01 հունվար 2013թ.-31 դեկտեմբեր 2014թ)՝ 27.000.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
«06» [illegible] 2008 թ.

# Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սևանի Վազգենյան դպրանոցի սաների ուսումնակրթական պայմանների բարելավման

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Աշխարհասփյուռ հայ ժողովրդի համար կրթել և դաստիարակել ուսյալ և լուսամիտ հոգևոր սպասավորներ |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարման արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Սևանի թերակղզի/Հոգևոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | 72 000 000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ի դեմս Սևանի Վազգենյան Դպրանոցի սաների |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են մոտ 87 սաներ կրթող Սևանի Վազգենյան դպրանոցն ապահովել բնական գազով, էլեկտրաէներգիայով, հաց և հացամթերքով՝ 72 000 000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2014թ.:<br><br>Սևանի Վազգենյան դպրանոցի սաների ուսումնակրթական պայմանների բարելավման աշխատանքներն իրականացվում են.<br><br>- «Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Գեղամա» մասնաճյուղի կողմից պայմանագիր N 78՝ կնքված 05.05.2008 թ., (ՀՀ, ք. Սևան, Նալբանդյան 59, ՀՎՀՀ 01520882), որով նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br><br>- «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ Սևանի ԳԳՄ-ի կողմից, պայմանագիր N Ա 14104063118՝ կնքված 16.05.2006 թ., լրացուցիչ համաձայնագիր՝ կնքված 25.04.2008թ., (ՀՀ, ք. Սևան, Նաիրյան 154, ՀՎՀՀ 00046317), որով նախատեսվում է գազի մատակարարում 25 000 000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br><br>- «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից, պայմանագիր N 1՝ կնքված 21.08.2008թ., (ՀՀ, ք. Սևան, Չարենցի 4, ՀՎՀՀ 08603531), որով նախատեսվում է հացի և հացամթերքի մատակարարում 27 000 000 (քսանյոթ միլիոն) ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ: |
| 10. | Չեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է սպառել մոտ 20 000.0 հզ դրամի էլեկտրաէներգիա՝ առանց ԱԱՀ-ի, 25 000.0 հզ դրամի գազ՝ առանց ԱԱՀ-ի, 27 000.0 հզ դրամի հաց և հացամթերք՝ առանց ԱԱՀ-ի: Ընդամենը 72 000.0 հզ ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Սևանի քաղաքապետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ադմինիստրատիվ հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տնտեսական և Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1276 - Ա
քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ
ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-1/19297-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 02/7618-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N ՎՄ/3-4/15602-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 3,400.000 դրամ արժողությամբ «Ռուբեն Սևակ թանգարանի ցուցափեղկերի պատրաստում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարիտաս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03301484) 2013 թվականի հուլիսի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 10 հատ ցուցափեղկի պատրաստում՝ շպրնապատ ԴՍՊ-ից և տեղադրում՝ 3,400.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«06» օգոստ. 2013 թ.

Ռուբեն Սևակ թանգարանի ցուցափեղկի կառուցման և տեղադրման աշխատանքների

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է տեղադրել ցուցափեղկ Ռուբեն Սևակ թանգարանում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին,Հոգևոր-քաղաքաշինական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,400,000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հավատացյալ ժողովուրդը և միաբանությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 26 հուլիսի 2013թ. – 31 դեկտեմբերի 2013թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Ցուցափեղկի կառուցման և տեղադրման աշխատանքներ Ռուբեն Սևակ թանգարանում՝ 3,400,000 ՀՀ դրամ գումարով:<br>Աշխատանքներն իրականացվում է Փայտամշակման կենտրոն «Կարիտաս» ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Աշտարակի խճուղի 2Ա, ՀՎՀՀ 03301484) կողմից, պայմանագիր կնքված 26.07.2013թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Ռուբեն Սևակ թանգարանի (10 հատ կաղնե շպոնապատ ԴՍՊ-ից, իսկ իրանի հեծանները կաղնեփայտից, ներսից թավշեպատ, ապակին 6 մմ) ցուցափեղկի կառուցման և տեղադրման աշխատանքները 3,400,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1277 - Ա**
**քաղ. Երևան**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷՕՐՆԵԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-1/19523-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 02/7617-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15808-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 2,172,295.380 դրամ արժողությամբ «Էօրնեկեան վարժարանի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Այգեձոր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00815501) 2013 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N 07Շ/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Էօրնեկեան վարժարանի կառուցման աշխատանքների իրականացում՝ 2,172,295.380 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ____________

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«06» ____________ 2013 թ.

Էօրնէկեան վարժարանի կառուցման աշխատանքների

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կատարել Էօրնէկեան վարժարանի կառուցման աշխատանքներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուր Էջմիածին/Հոգեւոր-քաղաքաշինական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2,172,295,380 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վարժարանի սաները և ուսուցչական կազմը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 22 հոկտեմբերի 2013թ. – 22 ապրիլի 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Էօրնէկեան Վարժարանի կառուցման աշխատանքներ՝ 2,172,295,380 ՀՀ դրամ գումարով: Աշխատանքներն իրականացվում է՝ 1. <<Այգեձոր>> ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Աճառյան 35/3, ՀՎՀՀ 00815501) կողմից, պայմանագիր՝07Շ/13, կնքված 22.10.2013թ, 2,172,295,380 ՀՀ դրամ գումարով, |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կատարել Էօրնէկեան դպրոցի կառուցման աշխատանքներ 2,172,295,380 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1278 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-1/-1935713, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 02/7616-13, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 05/14.2/7710-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15807-13 եզրակացությունները,*

***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 251,078.748 դրամ արժողությամբ «Սևան քաղաքի եկեղեցու կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շինկոմպլեքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00108082) 2013 թվականի ապրիլի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սևան քաղաքի եկեղեցու կառուցման աշխատանքների իրականացում՝ 251,078.748 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Սևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«01» ____ 2008 թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Սևան քաղաքի եկեղեցու կառուցման

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Սևան քաղաքի նոր եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարման արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | «ԷՄ- ԲԻ» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Սևան, Նաիրյան 1/Հոգևոր-քաղաքաշինական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 251, 078, 748 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ի դեմս հավատացյալ ժողովրդի |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 26 ապրիլի 2013թ. – 26 սեպտեմբերի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են կառուցել կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցի: Եկեղեցու հատակագծային չափերն են 14.5 x 15.1 մ, բարձր. 26.0 մ՝ 251,078,748 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Սևան քաղաքի եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքներն իրականացվում են «Շինկոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 00108082)՝ պայմանագիր կնքված 26.04.2013, 26 ապրիլի 2013թ. – 26 սեպտեմբերի 2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում են շինմոնտաժային աշխատանքներ, պատերը և տանիքի ծածկերը՝ սրբատաշ տուֆից, կոնստրուկցիաները՝ մոնոլիտ երկաթբետոնից՝ 251,078,748 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության և Սևան քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1279 - Ա**
**քաղ. Երևան**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՈՍԿՅԱ ԵՎ ԱՐԾԱԹՅԱ ԿԱԶՄԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/18342-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 02/-7274-13, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 01/301/4407-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 98,731.260 դրամ արժողությամբ «Ոսկյա և արծաթյա կազմերի պատրաստման աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02556646) 2013 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սեփական նյութերով գրքերի արծաթյա և ոսկյա կազմերի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 98,731.260 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«25» նոյեմբերի 2013 թ.

Ոսկյա եւ արծաթյա կազմերի պատրաստման աշխատանքների     ծր. 16/3

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է պատրաստել ոսկյա իրեր: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ապրանքի գնում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 98,731,260 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վեհափառ Հայրապետի հյուրերը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 13 սեպտեմբերի 2013թ. – 28 դեկտեմբերի, 2013թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է գնել 7 հատ գրքի ոսկյա կազմ, մեկ հատի գինը՝ 5,659,180 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 39,614,260 ՀՀ դրամ և արծաթյա 100 հատ գրքի կազմ, մեկ հատի գինը՝ 591,170 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 59,117,000 ՀՀ դրամ:<br>Աշխատանքներն իրականացվում է Երևանի Ոսկերչական Գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 12, ՀՎՀՀ 02556646):<br>Ծրագիրը իրականացվելու է հետևյալ ժամկետում՝ 13 սեպտեմբերի 2013թ.- 28 դեկտեմբերի, 2013թ.: Ընդհանուր գումարը՝ 98,731,260 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել 7 հատ ոսկյա և 100 հատ արծաթյա գրքերի կազմի գնում 98,731,260 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1280 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՄՅԱՆ ԽՑԵՐԻ ԵՎ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՀԼԻՃԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/19369-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/7712-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16077-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 14,342.286 դրամ արժողությամբ «Երեմյան խցերի և Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճի համար վարագույրների պատրաստում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շեն հոլդինգ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02201344) 2013 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N 08Ա/013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երեմյան խցերի և Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճի համար վարագույրների պատրաստում և տեղադրում՝ 14,342.286 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«12» դեկտեմբերի 2013 թ.

Երեմյան խցերի և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճի համար վարագույրների պատրաստման և տեղադրման աշխատանքների

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է պատրաստել և տեղադրել վարագույրներ Երեմյան Խցերում և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուր Էջմիածին, |
| 6. | Ծրագրի բյուջեն | 14,342,286 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ճեմարանի սաները, ուսուցչական կազմը և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 22 սեպտեմբերի 2013թ. – 21 փետրվարի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել վարագույրների պատրաստման և տեղադրման աշխատանքներ Երեմյան Խցերում և Գևորգյան Ճեմարանի հանդիսությունների դահլիճում՝ 14,342,286 ՀՀ դրամ գումարով:<br>Աշխատանքներն իրականացվում է «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2, գործ. հասցե՝ ք. Երևան Արշակունյաց 41, ՀՎՀՀ 02201344) կողմից, պայմանագիր 08Ա/013 կնքված 22.10.2013թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել վարագույրների պատրաստում և տեղադրում Երեմյան Խցերում և Գևորգյան Ճեմարանի հանդիսությունների դահլիճում՝ (ապրանքացուցակը տես պայմանագրում կցված թիվ 1 և 2 հավելվածներում) 14,342,286 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1281 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/19368-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/7715-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/15996-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 7,768.000 դրամ արժողությամբ «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2013 թվականի հուլիսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքի կանաչապատման համար անհրաժեշտ ոռոգման համակարգերի անցկացման աշխատանքների իրականացում՝ 2,923.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2013 թվականի հուլիսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքում խոտածածկի, լանդշավտի իրականացման աշխատանքներ՝ 4,845.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«12» [illegible] 2013 թ.

<<Վաչէ և Թամար Մանուկյաններ>> մատենադարանի հարակից տարածքի բարեկակարգման աշխատանքների

# ԾՐԱԳԻՐ

16/2

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարեկարգել <<Վաչէ և Թամար Մանուկյաններ>> մատենադարանի հարակից տարածքը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուր Էջմիածին, |
| 6. | Ծրագրի բյուջեն | 7,768,000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հավատացյալ ժողովուրդը և աշխատակազմը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 18 հուլիսի 2013թ. – 1 փետրվարի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել խոտածածկի (սերմ, աշխատանք) լանդշավտի իրականացման եւ անհրաժեշտ ոռոգման համակարգերի (IRITROL SYSTEMS իտալական ֆիրմայի նյութերով)անցկացման աշխատանքներ 7,768,000 ՀՀ դրամ գումարով:<br>Աշխատանքներն իրականացվում է՝<br>1. <<Պրոֆ Ալ>> ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Մ. Մեծարենց 88ա, ՀՎՀՀ 01831375) կողմից, պայմանագիր՝ կնքված 18.07.2013թ.,՝ 4,845,000 ՀՀ դրամ գումարով.<br>2.<<Պրոֆ Ալ>> ՍՊԸ-ի ՀՀ, ք. Երևան, Մեծարենց 88ա, ՀՎՀՀ 01831375 կողմից, պայմանագիր՝ կնքված 18.07.2013թ.,՝ 2,923,000 ՀՀ դրամ գումարով:<br>Ընդհ. գումարը՝ 7,768,000 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կատարել <<Վաչէ և Թամար Մանուկյաններ>> մատենադարանի տարածքի բարեկարգման աշխատանքներ, կատարել խոտածածկի լանդշավտի իրականացման և կանաչապատման համար կատարել անհրաժեշտ ոռոգման համակարգերի (IRITROL SYSTEMS իտալական ֆիրմայի նյութերով) անցկացման աշխատանքներ 7,768,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1282 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-516-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 515 գրությունն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-1/19522-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15865-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 28-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Իզմիրլյան գիտաբժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կահավորում» ծրագրի մասին» N Մ-516-Ա ուրոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում և նույն որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ և 10-րդ կետերում «220,153.757 դրամ» բառերը փոխարինել «59,599.550 դրամ» բառերով.

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետը («Այգեձոր» ՍՊԸ-ի հետ 31.05.2013 թ. կնքված՝ 160,554.207 դրամ արժողությամբ գործարքը) և նույն որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 5-րդ ենթակետը («Այգեձոր» ՍՊԸ-ը (ՀՀ, ք. Երևան, Աճառյան 35/3, ՀՎՀՀ՝ 00815501) 160,554.207 դրամ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1283 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-848-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 504 գրությունն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/19370-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15817-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հաղիճավանքի վերականգնման 2-րդ փուլի շինարարական աշխատանքներ» ծրագրի մասին» N Մ-848-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «30 հուլիս 2013թ.» բառերը փոխարինել «20 հոկտեմբեր 2014թ.» բառերով.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1284 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19302-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/158143-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Վրաստանից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ համակարգչային հարակից սարքավորումներ (102 տեղ, 611 կգ ընդհանուր քաշով, 45.907 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բաժինների բնականոն գործունեությունը կազմակերպելու համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1285 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-956-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 514 գրությունն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-2/19596-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15886-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին N 1» N Մ-956-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Բարեգործական որակել Չինաստանից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռների՝

1) երեսապատման սոսնձված նրբատախտակ, պտուտակ (18 տեղ, 17,630 կգ ընդհանուր քաշով, 78,410.4 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,821.209 դրամ, «Արարատյան» Տ/Մ): Բեռը նախատեսված է Արաբկիրի և Բերդի եկեղեցիների շինարարության համար.

2) գեներատոր, հոսանքի փոխակերպիչ (2 տեղ, 4510 կգ ընդհանուր քաշով, 55.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 465,891 դրամ, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռն անհատույց տրամադրվելու է «Իզմիրլյան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1286 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-613-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2013 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 516 գրությունն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-1/19660-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16072-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Կրոնական գրքերի տպագրության համար թղթի գնում» ծրագրի մասին» N Մ-613-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «30 սեպտեմբեր 2013թ.» բառերը փոխարինել «01 դեկտեմբեր 2014թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկեմբերի 2013 թվականի N Մ- 1287 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-1/19602-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-8/16066-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի փետրվարի 6-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» N Մ-065-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդգար Փարթներս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2013 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տպագրել 600 օրինակ սեղանի օրացույց՝ 570.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1288 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N Մ-308-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-1/19664-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-8/16071-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի ապրիլի 26-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կլիմայի արևելյան հարթակ» N Մ-308-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդգար Փարթներս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2013 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագրի շրջանակներում տպագրել 1300 օրինակ սեղանի օրացույց՝ 1,014.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1289 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N Մ-308-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/19507-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-8/15878-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարոնյան 21, ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կլիմայի արևելյան հարթակ» N Մ-308-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդգար Փարթներս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2013 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագրի շրջանակներում տպագրել «Մենք ու մեր մոլորակը» ձեռնարկը՝ 3000 օրինակ՝ 600.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1290 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ- 1107-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-1/19529-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15887-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան Այգեստան 5 փող. տուն 15, ՀՎՀՀ՝ 02600555) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի Կապանի մասնաճյուղի ուսումնական մասնաշենքի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-1107-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԵՎԱՌ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09421326) 2013 թվականի նոյեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Կապանի Մաքալյ լուծումների լաբորատորիայի /mLabKapan/ վերանորոգման աշխատանքների տեխնիկական վերահսկողության և շինարարական խորհրդատվության ծառայությունների մատուցում՝ 1.200.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1291 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-1/19439-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 02/7660-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 03/07-1/15013-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՖԲ/ԱնՄ-4/9583-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15816-13 և Երևանի քաղաքապետարանի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 02/34-70766հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,831,823 դրամ արժողությամբ «Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող. 1-ին նրբ., տուն 14/16-1, ՀՎՀՀ՝ 01242562) ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2009 թվականի մարտի 1-ին կնքված՝ N Կ 012 0309.7867 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի մատակարարում և գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցում՝ տարեկան 1,231,040 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի մարտի 24-ին կնքված՝ N 01-0017-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 161,743 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2009 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 84,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2010 թվականի օգոստոսի 30-ին կնքված՝ N 262051 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 355,040 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն. այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարած աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ջերմիկ անկյուն» հիմնադրամի

տնօրեն _______________ Ե.Կիրակոսյանի կողմից

«09» դեկտեմբեր 2013 թ.

# «ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագրի նպատակներն են՝<br>1. «Ջերմիկ անկյուն» խմբային տունը ստեղծված է որպես համայնքահեն երկարաժամկետ խնամքի տուն՝ նպատակ ունենալով միայնակ, խնամքի կարիք ունեցող հաշմանդամներին ապահովել կացարանով, սննդով, կենսապահովման համար նվազագույն պայմաններով և բժշկական, սոցիալ-հոգեբանական օգնությամբ ու իրավունքների պաշտպանությամբ:<br>2. «Ջերմիկ անկյուն» խմբային տան նպատակն է հաշմանդամներին հասարակություն ներառման համար ապահովել համապատասխան միջոցառումների իրականացումը՝ կենցաղավարության, սոցիալ-մշակույթային, կրթական և այլ հմտությունների ուսուցման միջոցով:<br>3. «Ջերմիկ անկյուն» խմբային տան մոդելը, որպես հաշմանդամների վերականգնման այլընտրանքային ծառայությունների տրամադրման տնտեսական առումով առավել արդյունավետ և առաջադեմ տեսակ, ներդնել Հայաստանի Հանրապետությունում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ կառավարության 2013թ.-ի հունվարի 16 –ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի «Բ» ենթակետով նախատեսվող հարկային արտոնությունների ստացում: |
| 3. | Բարեգործը | «Ջերմիկ անկյան բարեկամներ» ինկորպորացիա<br>հասցե՝ ԱՄՆ, 1037, Արիզոնա 85280 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացվում է «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից<br>Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն, ՀՎՀՀ 01242562 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվում է Հայաստանում՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանում Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1տուն հասցեում, բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1 831 823 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր քսաներեք) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Ջերմիկ անկյուն» խմբային տան բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրները ավարտած, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձիք: Ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության, հատուկ կրթահամալիրների և «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից նախապես մշակված չափորոշիչների հիման վրա:<br>Ներկայումս խմբային տանը բնակվում են 13 երիտասարդներ (4 տղա և 9 աղջիկ), որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 և Փարաքարի թիվ 2 կրթահամալիրներից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 01 հունվար 2014թ. – 31 դեկտեմբեր 2014թ. (շարունակելի): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Ջերմիկ անկյուն» խմբային տան գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տարեկան հաշվարկը կազմում է 1831823 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր քսաներեք ) դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) որից՝ գազ -1196000 դրամ, ջուր -161743դրամ, էլեկտրաէներգիա -355040դրամ, հեռախոսակապ – 84000դրամ, գազի սպասարկում- 35040դրամ: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ակնկալվում է հարկային արտոնություն ստանալ հետևյալ գործարքների մասով`<br><br>• Պայմանագիր կնքված գազի (01.03.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9200 խ.մ. (1196000 դրամ` առանց ԱԱՀ-ի), էլեկտրոէներգիայի (30.08.2010թ. -անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 11200 կվտ.ժ. (355040 դրամ` առանց ԱԱՀ-ի), հեռախոսակապի (20.02.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 84000 դրամ` առանց ԱԱՀ –ի և ջրի (24.03.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 1140խ.մ. (161743դրամ` առանց ԱԱՀ-ի) սպասարկման գրասենյակների մատակարարման և սպասարկման դիմաց վճարների, գազի մատակարարման և սպասարկման (01.03.2009թ.-անժամկետ ), որի տարեկան ծախսը կազմում է 35040դրամ` առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Անմիջականորեն շահառուների սպառմանը չուղղված ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևան քաղաքի քաղաքապետարանի, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի և այլ հասարակական ու միջազգային կազմակերպությունների հետ : |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Ջերմիկ անկյուն» հիմնադրամը պարբերաբար և նաև իրենց պահանջով հաշվետվություն է ներկայացնում դոնոր կազմակերպությանը:<br><br>• Ծրագրի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով հաշվետվություն կներկայացվի նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1292 - Ա**
**քաղ. Երևան**

# «ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19309-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ԴԴ/22/13787-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N ՎՄ/3-4/15804-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով աջակցության նպատակով «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (114 տեղ, 8,340 կգ ընդհանուր քաշով, 98,479.84 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 6,525 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՑՈՒՑԱԿ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Չափ. միավ. | Քանակը | Քաշը /կգ/ | Գինը /$/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1-8 | մահճակալ | հ | 32 | 4900 | 83200 |
| 9-13 | բժշկական սեղանիկ | հ | 20 | 500 | 1220 |
| 14 | գրատախտակ | հ | 1 | 7 | 10 |
| 15,19,20 | օգտագործված հագուստ | հ | - | 27 | 130 |
| 16,17, 102-114 | բժշկական պարագաներ | | | | |
| | ներարկիչ | հ | 250 | 5 | 150 |
| | միզատոպրակ | հ | 80 | 20 | 160 |
| | կաթետեր | հ | 720 | 88 | 1408 |
| | շնչառական ֆիլտր | հ | 60 | 15 | 25 |
| | դիմակ | հ | 100 | 4 | 40 |
| | միանգամյա օգտագործման համակարգ | հ | 200 | 15 | 245 |
| 18,31,32 86-101 | աթոռ | հ | 25 | 112 | 244.84 |
| 21 | դեֆիբրիլյատոր | հ | 1 | 12 | 122 |
| 22 | օգտագործված բժշկական գործիքներ | հ | 120 | 20 | 295 |
| 23 | աչքի վիրահատության սարք | հ | 1 | 100 | 1750 |
| 24 | շտապօգնության մեքենայի պարգարակ | հ | 1 | 80 | 545 |
| | կարդիոմոնիտոր | հ | 12 | 120 | 240 |
| 25 | բարձր լարման ուժեղացուցիչ | հ | 1 | 650 | 1350 |
| 26 | ռենտգեն սարք ԷՕՊ | հ | 1 | 150 | 1650 |
| 27-28 | մոնիտոր | հ | 3 | 55 | 115 |
| 29 | ատամնաբույժի աթոռ | հ | 1 | 262 | 1190 |
| 30 | Ռենտգեն սարքի կառավարման վահանակ | հ | 1 | 268 | 2350 |
| 33 | պադգարակ | հ | 1 | 40 | 1100 |
| 34-37 | խոհանոցի կահույք | հ | 4 | 550 | 700 |
| 38 | ներքնակ | հ | 48 | 340 | 240 |
| 114 տեղ | | | | | |
| Ընդամենը՝ | | | | **8340** | **98479.84** |

Տնօրեն՝ Ա.Հ.ԹԱՄԱԶՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1293 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/19315-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N ԴԴ/22/13738-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15812-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Բելգիայից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 2 արկղ, 2.5 կգ ընդհանուր քաշով, 784 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 111.92 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1294-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3/3.8-2/19684-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N ԴԴ/22/13977-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎՄ/3-4/16005-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Մեծ Բրիտանիայից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 1 տեղ, 392 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 58.77 եվրո, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1295-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի N 3/3.8-2/19456-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N ԴԴ/22/13824-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/15879-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (թեսթ հավաքածուներ՝ 4 տեղ, 29.9 կգ ընդհանուր քաշով, 6,854.3 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- Ի296 -Ա**
**քաղ. Երևան**

